

ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՁԵԿՈՒՅՑ

ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
«ԱՆ-ՁՈՆ»
հրատարակչություն
2009

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բաժին 1. Կողմերի հավասարությունն ու մրցակցությունը՝ որպես արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր և դրա իրացումը քրեական գործերի դատական քննության ընթացքում

1.1. Ներածություն

1.2. Կողմերի հավասարության և մրցակցության վերաբերյալ ընդհանուր դրույթներ

1.3. Պաշտպանի մասնակցությունը դատական քննությանը

1.4. Կողմերի միջնորդությունների քննարկումը և լուծումը դատարանի կողմից

1.5. Մրցակցությունը և ապացույցներ ներկայացնելը

1.6. Դատաքննության ընթացքում ապացույցների հետազոտման կարգը որոշելը

1.7. Դատավճռում գործի քննության ընթացքում հետազոտված ապացույցները պատշաճ գնահատականի ենթարկելը

1.8. Հավասարությունը դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու համար պատասխանատվության հարցում

1.9. Եզրակացություն

Քաժին 2. Մեփականության հետ կապված վեճերը քննելիս գործի արդարացի քննության ապահովման հիմնախնդիրները

2.1. Ներածություն

2.2. Գործի քննության համար «խոչընդոտների» ստեղծում

Հայցադիմումի/դիմումի վերադարձնում

Քաղաքացիական գործով վարույթի կասեցում

2.3. Գործի քննության բացառում

Հայցադիմումի/դիմումի ընդունումը մերժելու ինստիտուտի կիրառում

Գործին մասնակից չդարձված անձի բողոքի վերադարձնում

Ակնհայտ անարդար վճիռների «անձեռնմխելիություն»

Քրեական և քաղաքացիական վարույթների փոխհարաբերակցության ոչ ճիշտ ընկալում

2.4. Քաղաքացիական/վարչական ինստիտուտների խառնաշփոթը «գույքի հարկադիր օտարման» գործընթացում

«Էքսպրոպրիացիոն» պայմանագրերի դատական որակումը

Փոխհատուցման գործընթացի նկատմամբ դատական վերահսկողությունը

Հանրային գործառույթներով quasi-ինքնուրույն ինստիտուտների ներգրավում

Բաժին 1. Կողմերի հավասարությունն ու մրցակցությունը՝ որպես արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր և դրա իրացումը քրեական գործերի դատական քննության ընթացքում**1.1. Ներածություն**

Հայաստանի Հանրապետությունում ընթացող դատաիրավական բարեփոխումների հիմնական նպատակներից է արմատական վերափոխման ենթարկել ՀՀ դատական իշխանության համակարգը՝ առաջնահերթ խնդիր ունենալով երաշխավորել անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Այդ գործընթացն առավել կարևորող գործոն դարձավ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) և դրան կից արձանագրությունների վավերացումը, որի արդյունքում Եվրոպական իրավական արժեհամակարգը պետք է դիտվեր այն հիմնական ուղենիշը, որը կկանխորոշեր ՀՀ իրավական համակարգի հետագա զարգացումը:

Թեև նման զարգացումը որոշակիորեն արտահայտվեց ՀՀ Սահմանադրության փոփոխություններում, այդուամենայնիվ, այն ձեռք բերեց ինքնանպատակ բնույթ, քանի որ մարդու իրավունքների, այդ թվում՝ արդար դատաքննության իրավունքի պաշտպանության եվրոպական չափանիշները պատշաճ կիրառություն չստացան:

Սրանով հանդերձ, եվրոպական արժեքների հետևողական ներդրումն առաջնահերթ կարևորություն է ստանում քրեական դատավարությունում, քանի որ մարդու իրավունքների տեսանկյունից այս ոլորտն օբյեկտիվորեն առավել զգայուն է:

Քրեական դատավարության եվրոպական չափանիշներն այն արժեքներն են, որոնք կարող են ապահովել ժողովրդավարական հասարակությունում մարդու իրավունքների պաշտպանությունը՝ առանց վնասելու հանցագործությունների դեմ պայքարում պետության քրեական քաղաքականության իրականացմանը: Սրանք

կոչված են ապահովելու քրեական դատավարությունում հանրային և մասնավոր շահերի համաչափությունն այն հաշվով, որ չխաթարվի հասարակության վստահությունը պետական համակարգի և, մասնավորապես, արդարադատության նկատմամբ:

Դրա հետ միասին, եվրոպական չափանիշներին համապատասխան օրենսդրության առկայությունն ինքնին անհրաժեշտ, սակայն բավարար պայման չէ նշված չափանիշներին համահունչ քրեական դատավարություն ունենալու համար: Ոչ պակաս կարևոր նշանակությամբ է առանձնանում դրա կիրառումը, քանի որ անգամ կատարյալ օրենսդրության պայմաններում քրեական դատավարությունը հեռու կլինի ժողովրդավար լինելուց, եթե չապահովվի այդ չափանիշներին համապատասխան կիրառություն:

Այդ կապակցությամբ ներկա պայմաններում առանձնակի արդիականություն է ձեռք բերում ՀՀ քրեական դատավարությունում արդար դատաքննության իրավունքի իրացման ուսումնասիրությունը, որը երաշխավորված է ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես էլ Եվրոպական կոնվենցիայով¹:

Արդար դատաքննության իրավունքն ընդգրկում է այնպիսի բաղադրատարրեր, ինչպիսիք են օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անկողմնակալ դատարանը, գործի քննության ողջամիտ ժամկետի պահպանումը, հրապարակային դատաքննության իրավունքը, կողմերի հավասարությունը և մրցակցությունը, անմեղության կանխավարկածը, քրեական հանցագործության մեջ յուրաքանչյուր մեղադրվողի իրավունքները և այլն:

Սույն Չեկույցի շրջանակներում անդրադարձ կկատարվի ՀՀ-ում քրեական գործերի դատական քննության ընթացքում կողմերի հավասարության և մրցակցության՝ իբրև արդար դատաքննության իրավունքի կարևորագույն բաղադրատարրերից մեկի իրացման հիմնահարցին՝ նպատակ ունենալով ապահովել դրա առավել

¹ Արդար դատաքննության իրավունքն ամրագրում է ստացել նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում և «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում:

ամբողջական և համակարգային հետազոտումը: Դա նաև պայմանավորված է նրանով, որ հենց դատական քննության ընթացքում է կողմերի մրցակցությունը ստանում առավել լիարժեք կիրառություն:

Մասնավորապես, այդ տեսանկյունից ուսումնասիրության կենթարկվեն Եվրոպական կոնվենցիայի համապատասխան դրույթները, դրանց կիրառման առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) ձևավորած նախադեպային պրակտիկան, ՀՀ ներպետական օրենսդրությունը ինչպես նաև դրանց համապատասխանության լույսի ներքո՝ ՀՀ իրավակիրառ պրակտիկան:

1.2. Կողմերի հավասարության և մրցակցության վերաբերյալ ընդհանուր դրույթներ

Յուրաքանչյուրի արդար դատաքննության իրավունքը երաշխավորված է ինչպես ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերով, այնպես էլ ՀՀ ներպետական օրենսդրությամբ:

Մասնավորապես, համաձայն Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

Դատավարության կողմերի հավասարությունը, թեև կոնվենցիոն նորմերով ուղղակի կարգավորում չի ստացել, Եվրոպական դատարանի մեկնաբանությամբ ներառվում է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված «արդար դատաքննություն» (fair trial) հասկացության մեջ: Այն արդար դատաքննության տարրերից միայն մեկն է, որն ընդգրկում է նաև քրեական դատավարության մրցակցության հիմնարար սկզբունքը: Դա նշանակում է, որ դատաքննության կողմերից յուրաքանչյուրին պետք է երաշխավորվի իր գործն այնպիսի պայմաններում ներկայացնելու հնարավորություն, որոնք, ի

համեմատ հակառակ կողմի, նրան չեն դնում էականորեն անբարենպաստ վիճակի մեջ: Կողմերի վիճակը դատաքննության ժամանակ պետք է լինի արդարացիորեն հավասար: Նշվածի հետ է կապվում Եվրոպական դատարանի կողմից առաջ քաշված «գեների հավասարության» ապահովման հայտնի թեզը:

Քրեական գործի դատական քննության ժամանակ, ուր բախվում են հակադիր շահեր, հենց «կողմերի հավասարությունն» է, որ կարող է ապահովել նրանցից յուրաքանչյուրի ողջամիտ հնարավորությունը ներկայացնելու իր գործը՝ ներառյալ ապացույցներ, այնպիսի պայմաններում, որտեղ կողմերից որևէ մեկը չունի ակնհայտ առավելություն: Հետևաբար, գործի դատական քննությունն արդարացի չի լինի, եթե այն անցկացվի մեղադրյալին պակաս բարենպաստ վիճակի մեջ անհիմն դնելու պայմաններում (*Նոյմաստերն ընդդեմ Ավստրիայի, 27.06.1968թ., կետ 22, Գե Հայեսը և Գիժսելսն ընդդեմ Բելգիայի, 24.02.1997թ., կետ 53*):

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»:

ՀՀ սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ ՀՀ Սահմանադրության նշված հոդվածի պահանջն է, ի թիվս արդար դատաքննության այլ երաշխիքների, դատաքննության իրականացումը կողմերի հավասարության պայմաններում²:

² ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը՝ քաղաքացի Գևորգ Գզրարյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ կետի, 414.2 հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով, 24.07.2007թ., կետ 7 (<http://concourt.am/armenian/decisions/common/2007/index.htm>):

Կողմերի հավասարության և մրցակցային դատավարության սկզբունքի կիրառման վերաբերյալ մեջբերված պահանջներն իրենց արտացոլումն են ստացել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսդրության մեջ:

Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քր. դատ. օր.)՝ մրցակցության սկզբունքը սահմանող 23-րդ հոդվածում նախանշված են հետևյալ իրավադրույթները.

1. Քրեական դատավարությունն իրականացվում է մրցակցության սկզբունքի հիման վրա:

2. Քրեական հետապնդումը, պաշտպանությունը եւ գործի լուծումը տարանջատված են. դրանք իրականացնում են տարբեր մարմիններ եւ անձինք:

3. Դատարանը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և արտահայտում է միայն իրավունքի շահերը:

4. Քրեական գործը քննող դատարանը, պահպանելով օբյեկտիվությունը և անկողմնակալությունը, մեղադրանքի և պաշտպանության կողմերի համար ստեղծում է գործի հանգամանքների քազմակողմանի և լրիվ հետազոտման անհրաժեշտ պայմաններ (...):

5. Քրեական դատավարությանը մասնակցող կողմերը քրեական դատավարական օրենսդրությամբ օժտված են իրենց դիրքորոշումը պաշտպանելու հավասար հնարավորություններով: Դատարանը դատավճիռը հիմնավորում է միայն այն ապացույցներով, որոնց հետազոտման ընթացքում կողմերից յուրաքանչյուրի համար ապահովվել են հավասար պայմաններ (...):»:

Սակայն Եվրոպական կոնվենցիայի պահանջների և Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկային լիարժեք համապատասխանության ապահովման համար անհրաժեշտ է հավաստել ոչ միայն ՀՀ օրենսդրության մեջ, այլ նաև իրավակիրառ պրակտիկայում դրանց պատշաճ պահպանումն ու կիրառումը: Այդ իսկ պատճառով սույն Ձեկույցն ունի ոչ միայն ՀՀ համապատասխան ներպետական իրավական ակտերում Եվրոպական (ստրասբուրգյան) չափանիշների արտացոլման, այլ նաև իրավակիրառ պրակտիկայում

դրանց պահպանման վիճակը պարզելու ուղղվածություն: Ընդ որում, իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրություններն առավելապես հիմնված են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, նրա աշխատակազմի կողմից դատական նիստերի դիտարկման արդյունքների վրա:

1.3. Պաշտպանի մասնակցությունը դատական քննությանը

Պաշտպանի մասնակցությունը քրեական գործի դատական քննությանը քրեական դատավարությունում մրցակցության սկզբունքի լիարժեք իրացումն ապահովող կարևոր պայման է, որի վերաբերյալ համապատասխան պահանջներ են սահմանված ինչպես Եվրոպական դատարանի վճիռներով, այնպես էլ ՀՀ գործող օրենսդրությամբ:

Այսպես, ըստ Եվրոպական դատարանի՝ «Ցանկացած քրեական դատավարություն...պետք է ունենա մրցակցային բնույթ և պետք է ապահովվի զենքերի հավասարությունը մեղադրանքի ու պաշտպանության միջև: Մրցակցային քրեական դատավարության իրավունքը ենթադրում է մյուս կողմի ներկայացրած դիտողություններին և ապացույցներին ծանոթանալու հնարավորություն ինչպես մեղադրանքի, այնպես էլ պաշտպանության համար» (*Ֆիտտն ընդդեմ Միացյալ Թագավորության, 16.02.2000թ., կետ 44*): Սրանով է որոշվում կողմերի հավասարության և մրցակցության՝ իբրև արդար դատաքննության իրավունքի հիմնարար բաղադրատարրի էությունը:

Մեկ այլ գործով նշվել է. «Ոչ մի հարց, որը նախնական դատական քննության ընթացքում գործը քննող դատավորի կողմից (...) տրվել է դիմողի փաստաբանի բացակայությամբ, չի կարող նշանակություն ունենալ գործի համար, թեև վերաքննիչ վարույթի ընթացքում այդ (...) վկաները լսվեն փաստաբանի ներկայությամբ» (*Դուրսոնն ընդդեմ Նիդերլանդների, 26.03.1996թ., կետ 68*):

Այս առումով քրեական գործի դատական քննությանը պաշտպանի մասնակցությանն առնչվող հարցի մեկնաբանությունը

կապվում է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» ենթակետի հետ, որը երաշխավորում է քրեական հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուրի իրավունքը «պաշտպանելու իրեն (...) իր ընտրած պաշտպանների միջոցով (...)»:

Դրանով իսկ Եվրոպական դատարանի կողմից գործի քննությանը պաշտպանի մասնակցությանը տրվում է առանձնակի կարևորություն, քանի որ Կոնվենցիան կոչված է երաշխավորելու ոչ թե տեսական և պատրանքային, այլ գործնականում և արդյունավետ իրականացվող իրավունքներ: Դա հատկապես վերաբերում է պաշտպանության իրավունքին (*Արտիկոն ընդդեմ Իտալիայի, 13.05.1980թ., կետ 33*):

Վերոգրյալի հետ կապված, համապատասխան նորմեր են նախատեսված ՀՀ քր. դատ. օր. 23-րդ հոդվածում, որի 7-րդ մասը սահմանում է. «Դատարանն ապահովում է առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում գործի քննությանը կողմերի մասնակցության իրավունքը»: Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ դատարանում քրեական գործի քննությանը կողմերի մասնակցությունը պարտադիր է:

ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 2-րդ մասը երաշխավորում է հանցագործության մեջ մեղադրվող անձի պաշտպանության իրավունքը. «Յուրաքանչյուր ոք ունի ձերբակալման, խափանման միջոցի ընտրման կամ մեղադրանքի առաջադրման պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք»:

Ըստ այդմ, ՀՀ քր. դատ. օր. 19-րդ հոդվածի 1-ին մասը³ ամրագրում է, որ մեղադրյալն ունի պաշտպանության իրավունք: Այնուհետև, նույն հոդվածի 2-րդ մասը քրեական վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնում է մեղադրյալին բացատրել նրա իրավունքները և ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրա պաշտպանվելու փաստացի հնարավորությունը (նույնաբովանդակ պահանջներ է նախատեսում

³ Հոդվածի երաշխիքները հավասարապես վերաբերում են նաև քրեական դատավարության այնպիսի սուբյեկտի, ինչպիսին կասկածյալն է:

ման ՀՀ քր. դատ. օր.՝ մեղադրյալի իրավունքները և պարտականությունները սահմանող 65-րդ հոդվածը): Օրենսդիրը երաշխավորել է ման մեղադրյալի իրավունքը մեղադրանքից պաշտպանվել ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի և օրինական ներկայացուցչի միջոցով (ՀՀ քր. դատ. օր. 19-րդ հոդվածի 4-րդ մաս):

Վերը նշվածի առնչությամբ ՀՀ քր. դատ. օր.՝ դատական քննությանը պաշտպանի մասնակցության և նրա չներկայանալու հետևանքների կանոնակարգմանը վերաբերող 304-րդ հոդվածը սահմանում է.

«1. Պաշտպանը դատական քննությանը մասնակցելիս օգտվում է մեղադրողի հետ հավասար իրավունքներից:

2. Պաշտպանի չներկայանալու և այդ միատում նրան մեկ ուրիշ պաշտպանով փոխարինելը հնարավոր չլինելու դեպքում գործի քննությունը հետաձգվում է: Գատական միստին չներկայացած պաշտպանի փոխարինումը թույլատրվում է միայն ամբաստանյալի համաձայնությամբ: Եթե ամբաստանյալի կողմից հրավիրված պաշտպանի մասնակցությունն անհնար է անընդմեջ երեք դատական միստի չներկայանալու կամ տևական բուժում պահանջող հիվանդության կամ որևէ այլ հիմքով երկար ժամանակով դատական միստին ներկայանալու անհնարինության պատճառով, դատարանը, հետաձգելով դատական քննությունը, իրավունք ունի ամբաստանյալին առաջարկել ընտրելու այլ պաշտպան, իսկ նրա հրաժարվելու դեպքում՝ նշանակել նոր պաշտպան: Գործը հետաձգելիս, լուծելով պաշտպանին փոխարինելու հարցը, դատարանը հաշվի է առնում նման որոշման նպատակահարմարությունը: Գործին նոր մասնակցող պաշտպանին դատարանը բավարար ժամանակ է տրամադրում գործի նյութերն ուսումնասիրելու համար: Նա իրավունք ունի միջնորդելու կրկնել ցանկացած գործողություն, որը դատական քննության ընթացքում կատարվել է նախքան իր ընդգրկվելը գործին, և որի արդյունքում գործի համար էական հանգամանքներ են պարզվել»:

ՀՀ քր. դատ. օր. մեջբերված իրավանորմերը հիմնված են ինչպես ՀՀ Սահամանադրության, այնպես էլ Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի վրա և կարևոր երաշխիք են քրեական

գործի դատական քննությանը մեղադրողի հետ պաշտպանի հավասար մասնակցության, ինչպես նաև դրա հետ կապված մեղադրյալի պաշտպանության հիմնարար իրավունքի լիարժեք իրացման ապահովման համար:

Սակայն գործնականում հանդիպում են դեպքեր, երբ վերը նշված պահանջների խախտմամբ քրեական գործի դատական քննությունն իրականացվում է գործին մասնակցող պաշտպանի բացակայությամբ:

Այսպես, 2008 թվականի մարտի 1-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների կապակցությամբ հարուցված քրեական գործի քննության շրջանակներում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների կողմից դատական նիստերի դիտարկման արդյունքների համաձայն, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը 16.03.2009թ. դատական նիստում ամբաստանյալ Ս.Մ.-ի պաշտպան Հ.Ա.-ի նկատմամբ կիրառել է ՀՀ քր. դատ. օր. 314.1-րդ հոդվածով նախատեսված դատական սանկցիա՝ նրան պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով դիմելով Փաստաբանական պալատ: Այնուհետև, դատարանը որոշում է կայացրել շարունակել գործի քննությունը դատական նիստին չներկայացած պաշտպանի բացակայությամբ: Վերոգրյալի համար հիմք է ծառայել այն, որ պաշտպանը չի ներկայացել դատական նիստերի դահլիճ, և նրա չներկայանալու վերաբերյալ որևէ հարգելի պատճառ կամ հանգամանք դատարան չի ներկայացվել:

Նկարագրված իրավիճակում դատարանի կողմից ըստ էության խախտվել են վերը հիշատակված իրավական պահանջները, որոնք գործի քննությունը պաշտպանի բացակայությամբ շարունակելու հնարավորություն չեն ընձեռում: Դատարան չներկայանալու հիմքով գործը հետաձգելիս ՀՀ օրենսդիրը գործի քննության շարունակությունն ամեն դեպքում կապում է պաշտպանի պարտադիր մասնակցության հետ (թեև գործին նոր մասնակցող):

1.4. Կողմերի միջնորդությունների քննարկումը և լուծումը դատարանի կողմից

ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ դատարանի կողմից միջնորդությունների քննարկման և լուծման հետ կապված հարցերին տրվել է առանձին կարգավորում:

Մասնավորապես, ՀՀ քր. դատ. օր. 331-րդ հոդվածը վերաբերում է դատական նիստի նախապատրաստական մասում միջնորդություններ հարուցելուն և լուծելուն: Համաձայն այդ հոդվածի՝ նախագահողը հարցնում է մեղադրանքի կողմին և պաշտպանության կողմին, թե արդյոք նրանք ունեն միջնորդություններ նոր ապացույցներ պահանջելու և գործին կցելու մասին: Միջնորդություն հարուցող անձը պարտավոր է ցույց տալ, թե հատկապես ինչ հանգամանքներ պարզելու համար են անհրաժեշտ լրացուցիչ ապացույցները:

Յուրաքանչյուր հարուցված միջնորդություն դատարանը պարտավոր է քննարկել, լսել կողմերի կարծիքը: Եթե հանգամանքները, որոնց բացահայտման համար հարուցված է միջնորդությունը, կարող են նշանակություն ունենալ գործի համար, կամ նյութը, որի ապացուցողական նշանակությունը վիճարկվում է, ստացված է օրենքի էական խախտումով, դատարանը բավարարում է միջնորդությունը: Միջնորդությունը մերժելու մասին դատարանը կայացնում է պատճառաբանված որոշում: Դատարանի կողմից միջնորդության մերժումը չի սահմանափակում միջնորդություն հարուցող անձի իրավունքը՝ նույն միջնորդությունը հարուցել հետագայում:

Դատարանն իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ որոշում կայացնել վկաներ կանչելու, փորձաքննություն նշանակելու, այլ ապացույցներ պահանջելու մասին (ՀՀ քր.դատ. օր. 331-րդ հոդված):

ՀՀ քր. դատ. օր. 102-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ միջնորդության և պահանջի վերաբերյալ ընդունված որոշումները պետք է լինեն պատճառաբանված:

Ըստ ՀՀ քր. դատ. օր. 313-րդ հոդվածի՝ այն բոլոր հարցերի առթիվ, որոնք լուծվում են դատարանի կողմից դատական քննության ժամանակ, դատարանը որոշումներ է կայացնում:

Վերոգրյալի հետ կապված, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների կողմից քրեական գործերի դատական քննության դիտարկումների արդյունքները վկայում են, որ միջնորդություններ հարուցելու ինստիտուտը բավականին տարածված է ՀՀ իրավակիրառ պրակտիկայում: Ընդհանուր իրավասության դատարաններում գործերը քննելիս միջնորդություններ հարուցվում են գրեթե յուրաքանչյուր դատական նիստում և դրանց գերակշիռ մասը բաժին է ընկնում պաշտպանության կողմին:

Վերաքննիչ դատարանում հարուցվող միջնորդությունների համեմատաբար փոքր տոկոսը կարելի է բացատրել ՀՀ օրենսդրությամբ վերաքննիչ վարույթում դատական քննության սահմանների և ընթացակարգային առանձնահատկություններով:

Դրա հետ միասին, նույն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեծամասամբ պաշտպանության կողմի միջնորդությունները դատարանի կողմից չեն բավարարվում: Ավելին, նույնիսկ արձանագրվում են դեպքեր, երբ պաշտպանության կողմի միջնորդությունները դատարանի կողմից ընդհանրապես որևէ արձագանք չեն ստանում: Այդ մասին են վկայում, օրինակ, Ա.Ս.-ի վերաբերյալ գործի դատական քննության դիտարկման արդյունքները:

Իրավակիրառ պրակտիկայում առկա են նաև դեպքեր, երբ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում դատարանների կայացրած որոշումներում պաշտպանության կողմի փաստարկներին պատշաճ անդրադարձ չի կատարվում: Օրինակ՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ Ա.Կ.-ի վերաբերյալ գործով որոշման մեջ դատարանը հիմնականում անդրադարձել է քրեական հետապնդման մարմնի ներկայացրած միջնորդության պատճառաբանություններին, իսկ միջնորդության վերաբերյալ պաշտպանության կողմի փաստարկներին անդրադարձ է կատարել հազվադեպ դեպքերում:

Իսկ, օրինակ, Հ.Մ.-ի վերաբերյալ գործով կամ Ա.Պ.-ի վերաբերյալ գործով նույն դատարանի որոշումներում հիշատակված չէ պաշտպանության կողմի որևէ փաստարկ:

Գրան հակառակ, Եվրոպական դատարանի վճիռների վերլուծությունը ցույց է տալիս, որ դատարանը միջնորդությունը մերժելու կամ բավարարելու մասին որոշման մեջ պետք է անդրադառնա ինչպես այն հարուցած, այնպես էլ դրա դեմ առարկություններ ներկայացրած կողմի փաստարկներին, միայն դրանց պատշաճ վերլուծության արդյունքներով հանգի համապատասխան հետևության (*Գեորգիադիսն ընդդեմ Հունաստանի, 29.05.1997թ., կետ 43, Հաջիանաստասիուն ընդդեմ Հունաստանի, 16.12.1992թ., կետ 33*): Նշված պահանջն ի վերջո ուղղված է քրեական դատավարությունում կողմերի հավասարության և նրանց իրական մրցակցության ապահովմանը:

Մեղադրանքի և պաշտպանության կողմերի միջև դատարանների կողմից դրվում է խտրականություն նույնսիկ նրանց նկատմամբ դրսևորած վերաբերմունքի հարցում: Օրինակ՝ ըստ փաստաբան Ս.Ռ.-ի կողմից ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին տրամադրված ձայնային սկավառակի՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում Գ.Ռ.-ի վերաբերյալ քրեական գործի դատական քննության ընթացքում դատավորը կողմերի հանդեպ դրսևորած դիմելաձևում ցուցաբերել է խիստ տարբերակված մոտեցում: Մասնավորապես, դատախազին դիմելիս օգտագործվել է «հարգելի» բառը (15.06.2009թ., 17.06.2009թ. դատական նիստեր), իսկ նրա կարծիքը կամ միջնորդությունը լսելուց հետո՝ «շնորհակալ եմ» արտահայտությունը (17.06.2009թ. դատական նիստ), մինչդեռ գործին մասնակցող պաշտպաններին դիմելիս նշված որևէ արտահայտություն ընդհանրապես չի օգտագործվել, դիմելաձևը եղել է առավել խիստ:

Այս համատեքստում, տեղին է հիշատակումն այն մասին, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների⁴

⁴ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2009 թվականի սեպտեմբերի 19-ի օրենքով Երևան քաղաքի համայնքների ընդհանուր իրավասության դատարանները վերանվանվել

ընդհանուր իրավասության դատարանում Ն.Փ.-ի վերաբերյալ քրեական գործի դատական քննության ընթացքում մեղադրողը առանց դատական նիստը նախագահողի թույլտվությունը հարցնելու մեղադրական եզրակացության եզրափակիչ մասը հրապարակել է նստած վիճակում (23.10.2009թ. դատական նիստ)⁵: Ըստ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների իրականացրած դիտարկման արդյունքների՝ երբ ամբաստանյալը փորձել է ճշգրտել՝ կարո՞ղ է ինքը նստած դիմել դատարանին, նախագահող դատավորը նշել է, թե դա կարող է տեղի ունենալ միայն իր թույլտվությամբ: Իսկ Ն.Փ.-ի այն հարցին, թե արդյոք մեղադրողի նստած հանդես գալը թույլատրվել է դատարանի կողմից, վերջինս պատասխանել է, թե մեղադրողը ոչ թե դիմել է դատարանին, այլ պաշտպանության կողմին ներկայացրել է մեղադրական եզրակացության եզրափակիչ մասը:

Նման մեկնաբանություններն, իհարկե, կրում են արհեստական բնույթ և ընդհանուր առմամբ վկայում են կողմերի հանդեպ դատարանի ունեցած խտրական վերաբերմունքի մասին: Դրանք վտանգում են ՀՀ քրեական դատավարությունում մրցակցության ու կողմերի հավասարության սկզբունքի ամբողջական իրացումը, ինչպես նաև անընդունելի են ՀՀ-ում իրավական որոշակիության լիարժեք ապահովման տեսնակյունից:

Վերոգրյալը հիմք է տալիս եզրակացնելու, որ ՀՀ-ում դատարանները դեռևս լիովին չեն ձեռքբերում քրեական հետապնդման մարմնին հարելու՝ նախկին քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված իրենց կարգավիճակից և դեռ շարունակում են իրենց վրա կրել դատախազական համակարգի ազդեցությունը:

են Երևան քաղաքի վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանների:

⁵ Այս մասին համապատասխան հրապարակում է եղել նաև «Հայկական ժամանակ» օրաթերթի 2009 թվականի հոկտեմբերի 23-ի, # 198 (2387) համարում:

1.5. Մրցակցությունը և ապացույցներ ներկայացնելը

Արդար դատաքննության իրավունքը ենթադրում է վարույթի մրցակցային բնույթ, որը նշանակում է կողմերի համար սկզբունքային հնարավորություն տեղեկացված լինելու բոլոր ներկայացված ապացույցների կամ արձանագրված դիտողությունների մասին և ունենալու դրանք մեկնաբանելու հնարավորություն (*Ռուիզ-Մաթեոսն ընդդեմ Իսպանիայի*, 23.06.1993թ., կետ 63, *Ֆիտտն ընդդեմ Միացյալ Թագավորության*, 16.02.2000թ., կետ 44):

Մրցակցությունը և կողմերի հավասարությունը քրեական դատավարության հիմնարար սկզբունքներից է: Ազգային օրենսդրությունը այդ պահանջը կարող է ապահովել տարբեր կերպ, սակայն կարևորն այն է, որ դրանով նախատեսված միջոցը երաշխավորի հակառակ կողմի՝ ներկայացված մեկնաբանությունների մասին տեղեկացված լինելու և դրանք իր տեսանկյունից մեկնաբանելու հնարավորությունը:

Բացի այդ, Եվրոպական դատարանի մեկնաբանությամբ քրեական հետապնդում իրականացնող մարմինները պետք է պաշտպանությանը հայտնեն իրենց տիրապետության տակ գտնվող գործին վերաբերող մեղադրող և արդարացնող բոլոր ապացույցների մասին (*Ռոուն և Դևիսն ընդդեմ Միացյալ Թագավորության*, 19.06.2001թ., կետ 60): Մեկ այլ՝ Յեսպերսն ընդդեմ Բելգիայի գործով Հանձնաժողովը հայտարարել է. «(...) կողմերի հավասարության սկզբունքին համապատասխան դատախազության մարմինների վրա պարտականություն է դրվում ներկայացնել նրանց տնօրինության տակ գտնվող կամ նրանց հասու ցանկացած նյութ, որը կարող է մեղադրյալին օգնել ազատվելու պատասխանատվությունից կամ ստանալու նվազ խիստ պատիժ: Նշված սկզբունքի գործողությունը տարածվում է այն նյութերի վրա, որոնք կարող են սասանել մեղադրանքի վկայությունների արժանահավատությունը» (*Յեսպերսն ընդդեմ Բելգիայի գործով Հանձնաժողովի* 14.12.1981թ. գեկույց, 55, 57 կետեր):

Այն, որ քրեական հետապնդում իրականացնող մարմինները պարտավոր են ձեռնարկել քր. դատ. օր-ով նախատեսված բոլոր

միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը մեղմացնող եւ ծանրացնող հանգամանքները, նախատեսված է նաև ՀՀ քր. դատ. օր.՝ գործի արդարացի քննության սկզբունքը սահմանող 17-րդ հոդվածում: Իսկ մեղադրյալի ու նրա պաշտպանի համար երաշխավորված է նախաքննության ավարտման պահից գործի բոլոր նյութերին ծանոթանալու, դրանցից անվճար պատճեններ հանելու և գործից ցանկացած ծավալի, ցանկացած տեղեկություն դուրս գրելու իրավունքը (ՀՀ քր. դատ. օր. 65-րդ հոդվածի 2-րդ մասի 16-րդ կետ, 73-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետ):

Այս առումով պետք է արձանագրել, որ ՀՀ իրավակիրառ պրակտիկայում շարունակում են տեղ գտնել դեպքեր, երբ վերը հիշատակված իրավական պահանջների խախտմամբ դատարանում գտնվող քրեական գործի ոչ բոլոր նյութերն են ներկայացվում մեղադրյալի կամ նրա պաշտպանի ծանոթացմանը: Նման եզրահանգման համար հիմք են, օրինակ, 2008 թվականի մարտի 1-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների կապակցությամբ հարուցված քրեական գործի դատական քննության դիտարկման արդյունքները, որն իրականացվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից: Այդ գործին մասնակցող պաշտպանները և մեղադրյալները հաճախ հայտարարություններ են արել այն մասին, որ քրեական գործի ոչ բոլոր նյութերն են իրենց ներկայացվել ծանոթացման և հանդես են եկել համապատասխան միջնորդություններով: Այսպես, ամբաստանյալ Ա.Ա.-ի պաշտպան Լ.Ս.-ն հայտարարել է, որ պաշտպանության կողմին ծանոթացման չի ներկայացվել այն փաստաթուղթը, որով գործին մասնակցող մեղադրողը ՀՀ գլխավոր դատախազի կողմից լիազորված է եղել հիշյալ քրեական գործով իրականացնել հսկողություն, դատավարական ղեկավարում և մեղադրանքի պաշտպանություն դատարանում: Ի պատասխան, դատարանը, հետաձգելով հարցի քննարկումը, հաստատել է, որ

պաշտպանության կողմն իրոք նշված փաստաթղթին ծանոթ չէ, քանի որ այն ներկայացվել է միայն դատարանին և քրեական գործի նյութերում առկա չէ: Պաշտպանության կողմին քրեական գործի ոչ բոլոր նյութերը ծանոթացման ներկայացնելու հայտարարությամբ հանդես է եկել նաև նույն գործով ամբաստանյալ Հ.Հ.-ի պաշտպան Մ.Ա.-ն:

Քրեական գործի նյութերը մեղադրյալին կամ գործին մասնակցող պաշտպանին ծանոթացման չտրամադրելու հետ կապված խնդիրները բարձրացվել են նաև Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքներում: Այսպես, ՀՀ փաստաբանների պալատի անդամ Դ.Գ.-ն բողոք է ներկայացրել այն մասին, որ Երևանի քրեական դատարանն իրեն հնարավորություն չի ընձեռնում ծանոթանալ քրեական գործի նյութերին և դրանցից անհրաժեշտ պատճենահանումներ կատարել:

Իրականում, սակայն, կողմերի հավասարությունը ենթադրում է, որ հենց պաշտպանության կողմը պետք է գնահատի, թե արդյոք մեղադրանքի կողմի մեկնաբանությունները արժանի են պատասխանի: Հետևաբար, արդարացի չէ այն, որ մեղադրանքի կողմը քրեական գործին վերաբերող փաստաթղթեր է հանձնում դատարանին առանց պաշտպանության կողմի իմացության և առանց դրանց պատասխանելու նրան հնարավորություն ընձեռելու:

Հատկանշական է, որ մեղադրանքի կողմի եզրահանգումները, ներկայացրած նյութերը մեկնաբանելու անուղղակի և ձևական հնարավորությունը մեղադրյալի (ամբաստանյալի) համար չի կարող համարժեք լինել այդպիսիք անմիջականորեն հետազոտելու և վիճարկելու նրա իրավունքին:

Կողմերի հավասարության սկզբունքի, հավասարության պայմաններում ապացույցների հետազոտման ապահովման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի դատական քննության իրականացման հարցը՝ առանց դրան հրավիրված վկաների ներկայության: Այսպես, ՀՀ քր. դատ. օր. 332-րդ հոդվածի համաձայն, դատական քննությանը հրավիրված վկաներից որևէ մեկի չներկայանալու դեպքում դատարանը, լսելով կողմերի կարծիքը, որոշում է կայացնում

գործի քննությունը շարունակելու կամ հետաձգելու մասին: Գատական քննությունը կարող է շարունակվել, եթե նշված անձանցից որևէ մեկի չներկայանալը չի խոչընդոտի գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը:

Գործի քննությունը հետաձգելու մասին որոշում կայացնելիս դատարանն իրավունք ունի հարցաքննել ներկայացած վկաներին: Եթե գործի քննությունը հետաձգելուց հետո այն քննվում է դատարանի նույն կազմով, ապա նշված անձինք երկրորդ անգամ դատական նիստի են կանչվում միայն անհրաժեշտության դեպքում:

ՀՀ քր. դատ. օր. 339-րդ հոդվածը վերաբերվում է վկային ցուցմունքներ տալուց հրաժարվելու համար հիմքերը պարզաբանելուն և ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու և ակնհայտ սուտ ցուցմունքներ տալու համար պատասխանատվության մասին նախազգուշացնելուն:

Այսպես՝ հարցաքննությունից առաջ նախազահողը պարզում է վկայի ինքնությունը և պարզաբանում է՝

1) իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների դեմ վկայելուց հրաժարվելու նրա իրավունքը,

2) ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու կամ սուտ ցուցմունքներ տալու համար պատասխանատվության մասին:

Այս պահանջների կատարումը նշվում է դատական նիստի արձանագրության մեջ:

Տասնվեց տարեկան չդարձած վկան ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու կամ սուտ ցուցմունքներ տալու համար պատասխանատվության մասին չի նախազգուշացվում (ՀՀ քր.դատ. օր. 339-րդ հոդված):

ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված է, որ վկաները հարցաքննվում են միմյանցից անջատ եւ դեռևս չհարցաքննված վկաների բացակայությամբ:

Նախազահողը պարզում է վկայի հարաբերությունն ամբաստանյալի, տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի և գործին մասնակցող այլ անձանց հետ և վկային

առաջարկում է հայտնել այն ամենը, ինչ հայտնի է իրեն գործի վերաբերյալ: Չի թույլատրվում վկային հարցերով ընդհատել:

Կողմի միջնորդությամբ դատական քննության կանչված կամ նրա կողմից ներկայացված վկային առաջին հերթին հարցաքննում է միջնորդություն հարուցած կամ վկային ներկայացրած անձը, այնուհետև՝ տվյալ կողմում հանդես եկող այլ անձինք, իսկ վերջում՝ հակառակ կողմի ներկայացուցիչները և դատարանը:

Դատարանի նախաձեռնությամբ կանչված վկային առաջին հերթին հարցաքննում է մեղադրանքի կողմը, ապա՝ պաշտպանության կողմը, այնուհետև՝ դատարանը (ՀՀ քր. դատ. օր. 340-րդ հոդված):

Հետաքննության, նախաքննության կամ նախորդ դատական քննության ընթացքում վկայի տված ցուցմունքների հրապարակումը, ինչպես նաև նրա ցուցմունքների ձայնագրառման վերաբրտադրումը դատական քննության ժամանակ թույլատրվում է, երբ վկան դատական նիստից բացակայում է այնպիսի պատճառներով, որոնք բացառում են նրա դատարան ներկայանալու հնարավորությունը, էական հակասություններ կան այդ ցուցմունքների եւ դատարանում վկայի տված ցուցմունքների միջև, ինչպես նաև քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:

Վկայի ցուցմունքների ձայնագրառման վերաբրտադրումը հնարավոր է միայն նրա հարցաքննության արձանագրությունը կամ դատական նիստի արձանագրության այն մասը հրապարակելուց հետո, որտեղ ամրագրված են վկայի ցուցմունքները (ՀՀ քր. դատ. օր. 342-րդ հոդված):

Վերոգրյալի առնչությամբ կատարված դիտարկումները ցույց են տալիս, որ իրավակիրառ պրակտիկայում առկա են դեպքեր, երբ դատակոչի ցուցակում նշված վկաները տարբեր պատճառներով (հիվանդության և այլ պատճառներ) չեն ներկայանում դատական նիստերին: Ընդ որում, խոսքն առավելապես վերաբերում է մեղադրանքի կողմից վկաներին: Այս դեպքում, ցավոք, քիչ չեն դեպքերը, երբ դատարանը բավարարվում է տվյալ վկայի ցուցմունքները հրապարակելով (ասենք, ծանուցագիր ուղարկելու կամ նույնիսկ բերման ենթարկելու փոխարեն): Նշած հարցերում

դիրքորոշումների ճշտման հետ կապված, դատարաններն առավելապես հաշվի են առնում մեղադրանքի կողմի կարծիքը:

Չնայած դրան, Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» ենթակետն ուղղակիորեն սահմանում է, որ քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները:

Նշվածի հետ կապված, Եվրոպական դատարանն ընդգծել է, որ բոլոր ապացույցները, որպես կանոն, պետք է ներկայացվեն մեղադրյալի ներկայությամբ հանրային լսման ժամանակ այն հաշվով, որպեսզի ապահովվի մրցակցությունը: Այս սկզբունքից կարող են լինել բացառություններ, սակայն դրանք չպետք է խախտեն պաշտպանության իրավունքը: Ընդհանուր կանոնի համաձայն՝ 6-րդ հոդվածի 1-ին մասը և 3-րդ մասի «դ» ենթակետը պահանջում են, որպեսզի մեղադրյալին համարժեք հնարավորություն ընձեռնվի վիճարկել իր դեմ վկայող անձանց պնդումներն ու հարցաքննության ենթարկել նրանց այն ժամանակ, երբ նրանք ցուցմունք են տալիս դատարանում կամ հետագա փուլերի ընթացքում (*Վան Սեշելենը և այլոք ընդդեմ Նիդերլանդների, 23.04.1997թ., կետ 51*):

Բացի այդ, քիչ չեն նաև դեպքերը, երբ Եվրոպական կոնվենցիայի և ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ վկաներին տրվում են ուղղորդող հարցեր (հիմնականում մեղադրողների կողմից): Ընդ որում, հենց մեղադրողների նման վարքագծի դրսևորումն առավել նկատվել է 2008 թվականի մարտի 1-ի իրադարձությունների կապակցությամբ հարուցված վերը հիշատակված քրեական գործի դատական քննության շրջանակներում, ինչի մասին վկայում են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից համապատասխան դատական նիստերի դիտարկման արդյունքները: Դրա վառ օրինակ կարող է ծառայել վկա Բ.Է.-ի հարցաքննությունը, որի ընթացքում մեղադրողի կողմից տրվել են միայն ուղղորդող հարցեր: Ավելին, երբ

ամբաստանյալներ Ա.Ա.-ն և Ս.Ս.-ն հարցեր են ուղղել վկային, մեղադրողն անընդհատ միջամտել է հարցաքննությանը, նույնիսկ բարձրաձայն բղավել նրանց վրա՝ վերջիններիս անվանելով «հանցագործներ»:

Մտահոգիչ օրինաչափությունից բացի, այս ամենը ևս վկայում է այն բանի մասին, որ գործի արդարացի քննության առումով հիմնականում ոչ միայն ՀՀ օրենսդրությունը, այլ նաև իրավակիրառ պրակտիկան կատարելագործվելու և եվրոպական չափանիշներին համապատասխանեցվելու կարիք ունի:

1.6. Դատաքննության ընթացքում ապացույցների հետազոտման կարգը որոշելը

Դատաքննությունը դատական քննության կենտրոնական մասն է, որտեղ դատարանը կողմերի անմիջական մասնակցության պայմաններում քրեական դատավարական ընթացակարգի շրջանակներում հանցագործության հանգամանքները պարզելու համար ուսումնասիրության է ենթարկում գործում առկա բոլոր ապացույցները:

Այս առումով, դատաքննության ընթացքում կողմերի հավասարության, ապացույցների հետազոտմանը նրանց հավասար մասնակցության իրավունքի ապահովման տեսանկյունից կարևոր նշանակություն է ստանում ՀՀ քր.դատ. օր. 335-րդ հոդվածում սահմանված իրավադրույթը. «Լսելով կողմերի կարծիքը՝ դատարանը որոշում է ապացույցների հետազոտման կարգը»:

Իբրև ՀՀ-ում դատարանների՝ քրեական հետապնդմանը հակված լինելու մասին նկատառման լրացուցիչ հիմնավորում, կարելի է հիշատակել Բաց հասարակության ինստիտուտի աջակցության հիմնադրամի և Հայկական զարգացման ինստիտուտի շրջանակներում ՀՀ-ում արդար դատաքննության իրավունքի իրացման վերաբերյալ անցկացված մոնիտորինգի արդյունքում ստացված այն վիճակագրական պատկերը, որ ապացույցների հետազոտման կարգը սահմանելիս 75,6 տոկոս դեպքերում դատարանը հաշվի է առել մեղադրանքի կողմի

դիրքորոշումը: Եվ սա չնայած նրան, որ 80,4 տոկոս դեպքերում դատարանների կողմից պահպանվել է ՀՀ օրենսդրության պահանջն այն մասին, որ ապացույցների հետազոտման կարգը դատարանի կողմից որոշվում է՝ լսելով կողմերի կարծիքը (ՀՀ քր.դատ. օր. 335-րդ հոդված):

Նշված համատեքստում զարմանալի չէ այն, որ, հակասելով մրցակցության սկզբունքի գաղափարին և արդար դատական քննությունն երաշխավորող՝ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի մյուս համապատասխան դրույթներին, դատական պրակտիկայում հանդիպում են դատավորների կողմից մեղադրական եզրակացության եզրափակիչ մասի հրապարակման դեպքեր⁶:

Սա ևս կարելի է համարել որոշ դատավորների հոգեբանության մեջ խորհրդային համակարգից մնացած «ավանդույթ», որը շտկելու համար անհրաժեշտ են ոչ միայն օրենսդրության մակարդակով դատաիրավական բարեփոխումների իրականացում, այլ նաև իրավակիրառողներին դրանց էության լիարժեք, հստակ և ճշգրիտ ներկայացում:

1.7. Դատավճռում գործի քննության ընթացքում հետազոտված ապացույցները պատշաճ գնահատականի ենթարկելը

Կողմերի հավասարության և ի վերջո արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ եվրոպական չափանիշների և ՀՀ ներպետական օրենսդրական դրույթների իրացման ապահովման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի դատավճռում գործի քննության ընթացքում հետազոտված բոլոր ապացույցներին, դրանց անթույլատրելիության վերաբերյալ կողմերի առաջ քաշած փաստարկներին (գոնե դրանցից հիմնականներին) դատարանի կողմից պատշաճ գնահատական տալը, դրանց ամբողջական վերլուծության կատարումը:

⁶ Արդար դատաքննության իրավունքի իրացումը ՀՀ դատական համակարգում (Մոնիտորինգի արդյունքներ), Երևան, 2009, 154-155 էջերը:

Նման համոզմունքը բխում է դատական ակտերի (հատկապես խոսքը վերաբերում է գործն ըստ էության լուծող ակտերին) պատճառաբանված լինելու վերաբերյալ եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայից:

Դատավճռի պատճառաբանված լինելու վերաբերյալ որոշակի պահանջներ է բովանդակում ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը: Մասնավորապես, ՀՀ քր. դատ. օր. 371-րդ հոդվածը սահմանում է. «Դատավճռի նկարագրական-պատճառաբանական մասում ցույց է տրվում՝

1) մեղադրանքի բովանդակությունը.

2) գործի հանգամանքների, մեղադրանքի ապացուցված լինելու եւ ամբաստանյալի մեղավորության մասին դատարանի հետետությունները.

3) այն ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետետությունները.

4) օրենքի այն նորմերը, որոնցով դատարանը ղեկավարվել է որոշում ընդունելիս»:

Նշվածին հակառակ, գործնականում քիչ չեն դեպքերը, երբ գործի քննության ողջ ընթացքում պաշտպանության կողմը բարձրացնում է մեղադրանքի հիմքում դրված ապացույցների թույլատրելիության հետ կապված հարցեր, վիճարկում առանձին ապացույցներ, սակայն դատարանը դատավճռում դրանք որևէ գնահատականի չի արժանացնում կամ բավարարվում է ընդհանրական ձևակերպումների օգտագործմամբ: Իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ հաճախ դրանց մասին հիշատակումը դատավճռում հաճախ շրջանցվում է: Նման հետևության հանգելու համար հիմք կարող է ծառայել, օրինակ, 2008 թվականի մարտի 1-ի իրադարձությունների կապակցությամբ հարուցված քրեական գործի քննության արդյունքում Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի կայացրած դատավճիռը Ա.Ա.-ի և Ս.Ս.-ի վերաբերյալ:

Նշված գործի քննության ընթացքում ամբաստանյալների պաշտպանների կողմից վիճարկվել են դեպքի վայրի զննության

արձանագրությունների, իրեղեն ապացույց ճանաչելու մասին մի շարք որոշումների, դրանց հիման վրա նշանակված և ստացված փորձաքննությունների եզրակացությունների, ինչպես նաև առանձին վկաների հարցաքննության արձանագրությունների թույլատրելիությունը: Այդ կապակցությամբ պաշտպանների փաստարկները նշվել են դատարանին ներկայացված միջնորդություններում, ինչպես նաև նրանց պաշտպանական ճառերում:

Մինչդեռ, դատարանն իր դատավճռում պաշտպանության կողմի փաստարկներին պատշաճ անդրադարձ չի կատարել, դրանք անհրաժեշտ վերլուծության չի ենթարկել: Փոխարենը, դատարանը բավարարվել է հետևյալ ընդհանրական ձևակերպմամբ. «Քննարկելով պաշտպանության կողմի միջնորդությունները՝ գործով ձեռք բերված որոշ ապացույցների օգտագործման անթույլատրելիությունը հաստատելու մասին, դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են և ենթակա են մերժման, քանի որ միջնորդությունների մեջ նշված ապացույցները ձեռք են բերվել և ապացույց են ճանաչվել օրենքով սահմանված կարգով»:

Նման մոտեցումները, բնականաբար, ոտնահարում են գործի քննության ընթացքում կողմերի հավասարությունը և նրանց իրական մրցակցությունն ապահովող իրավանորմերը, ինչն ընդհանրապես վտանգի տակ է դնում ՀՀ իրավական համակարգում արդար դատաքննության իրավունքի գաղափարի լիարժեք արմատավորումը: Արդյունքում, օրենքով սահմանված երաշխիքները վերաձվում են պատրանքային, զուտ ձևական, գործնականում կյանքի կոչվելու անընդունակ պահանջների:

1.8. Հավասարությունը դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու համար ատասխանատվության հարցում

Կողմերի հավասարության, հետևապես նաև գործի արդարացի քննության ապահովման տեսանկյունից ոչ պակաս կարևոր է նաև հավասարության հավաստումը դատավարության մասնակիցների

կողմից դատարանի հանդեպ անհարգալից վերաբերմունք դրսևորելու համար պատասխանատվության հարցում:

Այս առումով ՀՀ ներպետական օրենսդրությունը դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու համար պատասխանատվության հարցում որդեգրել է որոշակիորեն տարբերակված մոտեցում:

Մասնավորապես, ՀՀ քր. դատ. օր. 314.1-րդ հոդվածը դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու համար սահմանում է դատական սանկցիաների կիրառման ինստիտուտը: Ըստ նշված հոդվածի 1-ին մասի՝ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու, նիստի բնականոն ընթացքին խոչընդոտելու, իրենց դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու կամ դատավարական պարտականությունները անհարգելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում դատարանն իրավունք ունի դատավարության մասնակիցների, քրեական դատավարությանը մասնակցող անձանց և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ կիրառելու հետևյալ դատական սանկցիաները.

- 1) նախազգուշացում.
- 2) նիստերի դահլիճից հեռացնելը.
- 3) դատական տուգանք.

4) պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապատասխանաբար գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելը:

Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու համար ՀՀ քրեական օրենսդրությամբ սահմանվում է նաև քրեական պատասխանատվություն: Մասնավորապես, ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը, որը դրսևորվել է վկայի կամ տուժողի կամ պաշտպանի դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելով կամ դատավորի կարգադրությանը չենթարկվելով կամ դատական նիստի կարգը խախտելով կամ այլ գործողություն

կատարելով և վկայում է դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ բացահայտ արհամարհանքի մասին՝
պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով»:

Ինչպես երևում է, օրենսդիրը դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորող սուբյեկտներ է համարում միայն վկային, տուժողին և պաշտպանին: Քրեական դատավարությանը մասնակցող մյուս անձինք նշված հանցակազմի սուբյեկտներ չեն: Այսինքն՝ նրանց՝ դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելը կամ դատավորի կարգադրությանը չենթարկվելը կամ դատական նիստի կարգը խախտելը կամ այլ գործողություն կատարելը, որը կվկայի դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ բացահայտ արհամարհանքի մասին, դատարանի նկատմամբ արհամարհական վերաբերմունք չէ և ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմ չի առաջացնում:

Այսպիսով, վերոգրյալ նորմն անհավասար դրության մեջ է դնում, մասնավորապես, պաշտպանին դատավարության մյուս մասնակիցների, հատկապես՝ մեղադրողի համեմատ, քանի որ նույնպիսի արարքի համար պաշտպանը կարող է ենթարկվել քրեական հետապնդման, իսկ մեղադրողը և մյուսները՝ ոչ: Ավելին, դրանով որոշակիորեն սահմանափակվում է դատարանի՝ իր նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորած մեղադրողին և մյուսներին քրեական պատասխանատվության ենթարկելու համար օրենքով նախատեսված միջոցներ ձեռնարկելու հնարավորությունը:

Հետևաբար, մեջբերված իրավանորմը անհավասար դրության մեջ է դնում դատավարության կողմերին՝ մեղադրանքին և պաշտպանությանը՝ խտրականություն սահմանելով նրանց նկատմամբ իրավական վերաբերմունքի մեջ:

ՀՀ քրեական օրենսգրքի նշված նորմն, այդպիսով, հակասության մեջ է մտնում ինչպես կողմերի հավասարության և մրցակցության վերաբերյալ եվրոպական չափանիշների, այնպես էլ ՀՀ Սահմանադրության՝ օրենքի առջև բոլորի հավասարությանը,

դատական պաշտպանության իրավունքին, կողմերի հավասարությանը վերաբերող դրույթների հետ:

Նշված հարցը ՀՀ իրավակիրառ պրակտիկայում առանձնակի արդիականություն է ձեռք բերել, երբ փաստաբաններ Մ.Շ.-ի, Ա.Զ.-ի, Ա.Գ.-ի և Գ.Գ.-ի կողմից դատական նիստերի դահլիճը լքելը դիտվել էր՝ որպես դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք և ՀՀ քրեական օրենսգրքի հիշյալ նորմի կիրառմամբ նրանց նկատմամբ հարուցվել էին քրեական գործեր: Ընդ որում, այս մասին համապատասխան հայտարարություններ են հրապարակվել նաև www.court.am ինտերնետային կայքում:

Պետք է նշել, որ մինչև 16.12.2005թ. դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու համար պատասխանատվություն նախատեսված է եղել նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206¹-րդ հոդվածով: Ընդ որում, պաշտպանը (կամ փաստաբանն ընդհանրապես) նշված արարքի համար վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտների ցանկում հիշատակված չի եղել:

Նման պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքում առկա կարգավորումն ավելի է խորացնում քրեական դատավարությունում կողմերի միջև անհավասարությունը: Ուստի, առաջ է գալիս տրամաբանական հարցադրում, թե ինչո՞վ է պայմանավորված եղել քննարկվող արարքի քրեականացումը և առավել ևս պաշտպանին այդ հանցագործության սուբյեկտ ճանաչելը: Պարզաբանման կարիք ունի նաև հարցադրումն այն մասին, թե ի՞նչ պատճառներով է նշված նորմի կիրառումը համարվել անարդյունավետ:

Այնուհանդերձ, հաշվի առնելով վերոշարադրյալը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից 18.06.2009թ. ՀՀ սահմանադրական դատարան ներկայացվել է դիմում, որում խնդրվել է որոշել ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականությունը:

1.9. Եզրակացություն

Այսպիսով, ամփոփելով սույն Ձեկույցում նշված շարադրանքը, կարող ենք եզրահանգել՝

1. ՀՀ իրավակիրառ պրակտիկայում արդար դատաքննության իրավունքի խախտումները հաճախ պայմանավորված են նրանով, որ ՀՀ-ում դատարանները դեռևս լիովին ձեռքբերված չեն քրեական հետապնդման մարմնին հարելու՝ նախկին քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված իրենց կարգավիճակից և դեռ շարունակում են իրենց վրա կրել դատախազական համակարգի ազդեցությունը:

2. Դա իր հերթին տանում է նրան, որ անարդարացիորեն նենգափոխվում է դատարանի՝ իբրև արդարությունը մարմնավորողի դերն ու նշանակությունը՝ հանգեցնելով դատարանների և, ընդհանրապես, իրավական համակարգի նկատմամբ հասարակության վստահության կորստի:

3. Սույն Ձեկույցում վեր հանված խախտումները վերացնելու նպատակով անհրաժեշտ է արմատական փոփոխության ենթարկել ՀՀ-ում դատական իշխանությունը կրողների իրավամտաձողությունը՝ նորովի իմաստավորելու համար արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ միջազգային չափանիշների և ՀՀ ներպետական օրենսդրությամբ սահմանված իրավանորմերի լիարժեք իրացումն իրավակիրառ պրակտիկայում:

4. ՀՀ դատական համակարգը պետք է ընթանա ինքնամաքրման և ինքնակառավարման ուժեղացման ճանապարհով՝ ապահովելու համար նրա իրական անկախությունը կողմնակի որևէ ազդեցությունից:

5. Իրավակիրառ պրակտիկայում տեղ գտած խախտումները պայմանավորված են նաև ՀՀ օրենսդրության մեջ առկա թերություններով, առանձին հարցերի ոչ լիարժեք իրավական կարգավորմամբ: Ուստի, դրանում անհրաժեշտ է ամրագրել այնպիսի երաշխիքներ, որոնք կչեզոքացնեն մնան խախտումները, կնպաստեն ՀՀ-ում իրավական որոշակիության սկզբունքի առավել ամբողջական իրացման ապահովմանը:

Բաժին 2. Մեփականության հետ կապված վեճերը քննելիս գործի արդարացի քննության ապահովման հիմնախնդիրները

2.1. Ներածություն

Գործի արդարացի քննության սկզբունքը նախ և առաջ ենթադրում է արդարադատության մատչելիության իրավունքը: ՀՀ Սահմանադրության 18 հոդվածը այս առնչությամբ սահմանում է. *յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք*: Սահմանադրական արժեք ունեցող այս սկզբունքն արտացոլվել է նաև ՀՀ քաղ. դատ. օր.-ի 2 հոդվածում, համաձայն որի՝ *շահագրգիռ անձը իրավունք ունի օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել դատարան՝ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար*:

Ելնելով արդարադատության արդյունավետ կառավարման անհրաժեշտությունից՝ ՀՀ օրենսդիրը նախատեսում է գործերի քննության որոշակի դատավարական կարգ: Բայց իբրև դատավարական սահմանված կարգը չպետք է բացառի կամ խոչընդոտի անձի իրավունքների դատական պաշտպանության իրավունքի համար: Այս առնչությամբ գեկույցի շրջանակներում կքննարկվեն դատարանների կողմից հայցադիմումների/դիմումների վերադարձման, դրանց ընդունումը մերժելու, ինչպես նաև վերաքննիչ դատարանի կողմից՝ գործին մասնակից չդարձված անձի վերաքննիչ բողոքի վերադարձման հետ կապված հարցերը: Դատարանի կողմից հայցադիմումների ընդունման գործընթացում թույլ տրված բաց թողումները/ խախտումները խոչընդոտել են, իսկ առանձին դեպքերում նաև բացառել անձի՝ դատական պաշտպանություն ստանալու իրավունքը:

ՀՀ դատարանների կողմից երբեմն ճիշտ չի ընկալվում քրեական և քաղաքացիական վարույթների փոխհարաբերության հարցը, որի արդյունքում նախ չհիմնավորված կերպով կասեցվել են քաղաքացիական գործերի քննությունը՝ անձին գրկելով ողջամիտ ժամկետում դատական պաշտպանության իրավունքից: Ավելին, քրեական դատավարության ընթացքում քաղաքացիական հայցի քննության առանձնահատկություններով պայմանավորված, հատկապես հաշվի առնելով, որ քրեական գործի շրջանակներում քննված քաղաքացիական հայցերը այլևս չեն կարող նորոգվել քաղաքացիական դատավարության կարգով, առաջանում է խառնաշփոթ հարակից, բայց ոչ նույն քաղ. հայցերը քննելու կամ դրանք մերժելու տեսանկյունից: Ուստի կքննարկվեն նաև երկու այս վարույթների փոխհարաբերության ոչ ճիշտ ընկալման դեպքերը, ինչի հետևանքով դատարանները քաղաքացիական վարույթի շրջանակներում գրկել են անձին իր իրավունքների դատական պաշտպանության իրավունքից կամ ստեղծել արհեստական խոչընդոտներ՝ գրկելով նրան ողջամիտ ժամկետում իրացնել դատական պաշտպանության իրավունքը:

2001 թվականից ի վեր սեփականության իրավունքի վեճերի շարքում հատկապես մեծ թիվ են կազմում հասարակության և պետության կարիքների համար հարկադիր օտարված գույքի սեփականատերերի կողմից կամ նրանց դեմ պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից հարուցված գործերը⁷: Հաշվի առնելով դրանց տեսակարար կշիռը, այս առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ընդունված երկու որոշումների առկայությունը⁸, որոնք հաստատել են օրենքների առանձին դրույթների հակասահմանադրականությունը, Մարդու իրավունքների

⁷ ՀՀ կառավարության 2002 թ. օգոստոսի 1-ի թիվ 1151-Ն, 2004 թ. հուլիսի 15-ի թիվ 1025-Ն, 2001 թ. հոտեմբերի 5-ի թիվ 950, 2004 թվ. հունվարի 29-ի թիվ 57-Ն որոշումները:

⁸ ՀՀ ՍԴ 27.02.1998թ. Ազգային ժողովի կողմից 1995 թվականի դեկտեմբերի 27-ին ընդունված «Անշարժ գույքի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ մասերի՝ ՀՀ

եվրոպական դատարանում առկա տասնյակ գործերի առկայությունը՝ սույն զեկույցում կքննարկվեն պայմանագրի ազատության, «համաձայնագրերի» քվազի քաղաքացիական լինելու, ներգրավված անկախ մարմինների քվազի հանրային բնույթ ունենալու, ապացուցման պարտականության ոչ ճիշտ ընկալման հարցերը:

2.2. Գործի քննության համար «խոչընդոտների» ստեղծում

Հայցադիմումի/դիմումի վերադարձնում

ՀՀ Քաղ. դատ. օր.-ի 3 հոդվածի համաձայն՝ *դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա*: Հայցադիմումը կամ դիմումը դատարանի կողմից վերադարձնելու դեպքում դատարանը փաստորեն որոշակի ժամկետով հետաձգում է քաղաքացիական գործի հարուցումը, սակայն չի գրկում անձին դատական պաշտպանության իրավունքից: Անձին տրվում է որոշակի ժամանակ իր գործում առկա որպես կանոն տեխնիկական թերությունները վերացնելու համար: Սակայն, հայցադիմում-ների/դիմումների վերադարձման դեպքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առանձին դեպքերում վերադարձման ժամանակ մատնանշված թերությունները ըստ էության կարող են բացառել ողջամիտ ժամանակահատվածում քաղաքացիական գործի նորոգումը:

Օրենսդիրը հստակ սահմանում է բոլոր այն դեպքերը/պատճառները, երբ դատավորը իրավասու է որոշում կայացնել հայցադիմումը վերադարձնելու վերաբերյալ: Ընդ որում, դրանք որպես կանոն բխում

Սահմանադրության 8 հոդվածին և 28 հոդվածի երկրորդ մասին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով որոշում, ՀՀ ՍԴ 18.04.2006թ. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218 հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 104, 106 և 108 հոդվածների, ՀՀ Կառավարության կողմից 2002 թվականի օգոստոսի 1-ին ընդունված՝ «Երևանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում կառուցապատման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին» թիվ 1151-Ն որոշման՝ ՀՀ Սահմանադրության 31 հոդվածին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով որոշում:

են արդարադատության կառավարման շահերից, ասենք՝ գործն ընդդատյա չէ տվյալ դատարանին կամ առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ գործ այլ դատարանում կամ արբիտրաժային տրիբունալում, չի վճարվել սահմանված պետական տուրքը, հայցադիմումը չի ստորագրված, մեկ հայցադիմումում միացված են մեկ կամ մի քանի պատասխանողներին ուղղված միմյանց հետ չկապված պահանջներ և այլն: Դատական ակտերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դատավորները երբեմն չպատճառաբանված որոշումներ են կայացնում հայցադիմումները վերադարձնելու վերաբերյալ՝ սահմանելով ՀՀ քաղ. դատ. օր. 92 հոդվածով չնախատեսված պահանջներ: Այսպես 2007թ. սեպտեմբերի 5-ին Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարան հայցադիմում էր ներկայացվել բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը 6 մասի բաժանելու և դրանից հայցվորների բաժիններն առանձնացնելու պահանջների մասին: Դատարանի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել էր այն պատճառաբանությամբ, որ *հայցվորները չեն կցել ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական ստորաբաժանման կողմից տրված տեխնիկական եզրակացությունը բնակարանից բաժինն առանձնացնելու հնարավորության վերաբերյալ*: Դատարանի կողմից մման եզրակացության պահանջը ըստ էության երկար ժամանակով կբացառեր քաղաքացիական գործը դատարանում նորոգելը: Տվյալ դեպքում դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղ. դատ. օր.-ի 87, 88 և 92 հոդվածները: ՀՀ Քաղ. դատ. օր.-ի 88 հոդվածում ուղղակիորեն նշվում է, որ հայցադիմումին *կարող են* կցվել նաև հայցապահանջները հաստատող ապացույցներ: Այլ կերպ ասած՝ դատավարության այս փուլում ապացույցների ներկայացումը կրում է դիսպոզիտիվ բնույթ և պահանջել այն հայցադիմումը ներկայացնելիս կամ հիմք ընդունել հայցադիմումը վերադարձնելու համար, անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի կոպիտ խախտում է: Ավելին, ՀՀ քաղ. դատ. օր.-ի 49 հոդվածի 2 մասի համաձայն՝ *գործին մասնակցող անձը, որը հնարավորություն չունի անհրաժեշտ ապացույցներ*

ինքնուրույն ձեռք բերել գործին մասնակցող կամ չմասնակցող այլ անձից, որի մոտ այն գտնվում է, իրավունք ունի տվյալ ապացույցը պահանջելու միջնորդությամբ դիմել դատարան:

Այս գործով հայցվորը, ստանալով հայցադիմումի վերադարձման մասին որոշումը, եռօրյա ժամկետում այն բողոքարկեց Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարան, որը վերացրեց առաջին ատյանի դատարանի այդ որոշումը: Դատարանը ընդունեց, որ ստեղծվել են արհեստական խոչընդոտներ կողմի առջև, հղում արվեց քաղ. դատ. օր.-ի 49 հոդվածին, որը իրավունք է վերապահում գործին մասնակցող կողմին ապացույցների ձեռք բերման հարցում աջակցություն հայցել դատարանից: Այլ կերպ ասած՝ ամրագրվեց, որ ապացույցների ներկայացումը չի կարող կրել իմպերատիվ բնույթ դատավարության տվյալ փուլում:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դատարանները երբեմն պահանջում են ներկայացնել փորձաքննությունների եզրակացություններ, ինչը ինքնին հետաձգում է քաղաքացիական գործի հարուցումը, հետագայում նույնիսկ անհնարին դարձնելով անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը, քանի որ հնարավոր չէ կիրառել հայցի ապահովման ինստիտուտը:

Հայցադիմումների վերադարձման ինստիտուտի բացասական հետևանքները պատշաճ չեն ընկալվում ինչպես դատավորների, այնպես էլ ՀՀ արդարադատության խորհրդի կողմից: Վերը նշված գործով, կողմը Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարան առաջին ատյանի դատարանի որոշումը բողոքարկելու հետ միաժամանակ, խնդրել էր հարուցել կարգապահական վարույթ, հաշվի առնելով, որ առաջին ատյանի դատարանը ստեղծել էր արհեստական խոչընդոտներ իր իրավունքների ողջամիտ ժամկետում դատական պաշտպանության համար: Կարգապահական վարույթը հարուցվեց, սակայն Արդարադատության խորհուրդը ըստ էության որոշեց, որ վերադարձման ինստիտուտի ոչ ճիշտ կիրառումը չի հանգեցնում անձի իրավունքների անշտկելի խախտման, անձը իրավունք է ունենում կրկին անգամ դիմել դատարան քաղաքացիա-

կան գործի հարուցման պահանջով և կարգապահական վարույթը կարճվեց: Այլ կերպ ասած, դատավորները եթե անգամ անօրինական կերպով վերադարձնեն հայցադիմումները, մման խախտումները «արժանի չեն», որպեսզի դատավորների նկատմամբ կիրառվեն կարգապահական ներգործության մեջօգներ:

Քաղաքացիական գործով վարույթի կասեցում

Քաղաքացիական գործով վարույթի կասեցումը պետք է ուղղված լինի գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը: Վարույթի կասեցումը պայմանավորված է նաև արդարադատության արդյունավետ կառավարման նկատառումով, քանի որ այն թույլ է տալիս խնայել միջոցներ և խուսափել միմյանց հակասող ակտերի ընդունումից: Հարկ է նկատել, որ քաղաքացիական գործով վարույթի կասեցումը անհայտ ժամանակով, դրա անհիմն երկարաձգումը կարող է ունենալ ակնհայտ վնասակար հետևանքներ գործին մասնակցող անձի/անձանց համար: Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եղել են դեպքեր, երբ կասեցման որոշումից հետո կողմերը բավականին երկար ժամանակ սպասել են դատաքննության վերսկսմանը, մասնավորապես դատարանները հետամուտ չեն եղել և չեն ապահովել իրենց որոշումների՝ վարչական մարմինների կողմից ողջամիտ ժամկետում կատարմանը: Օրինակ՝ փորձաքննություն կամ կադաստրային չափագրումներ իրականացնելու նպատակով կասեցված դատական գործերը շատ երկար ժամանակ սպասում են համապատասխան մարմինների պատասխաններին:

Քաղ. դատ. օր.-ը սահմանում է քաղաքացիական գործով վարույթի կասեցման պարտադիր և ֆակուլտատիվ հիմքեր: Առաջին դեպքում դատարանը անվերապահորեն պարտավոր է կասեցնել վարույթը: Նման հիմքերի դեպքերում որպես կանոն քիչ են վիճահարույց խնդիրները, բացառությամբ օրենքով սահմանված առաջին հիմքի, այն է՝ անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական

դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցերով որոշում կայացնելը, քանի որ այստեղ ևս դատավորը պետք է գնահատի՝ նշված զուգահեռ ընթացող վարույթներով պարզաբանվող հանգամանքները արդյոք էական են քաղաքացիական գործի քննության համար: Ինչ վերաբերում է դատարանի հայեցողությանը վարույթի կասեցման դեպքերին /նշանակել է փորձաքննություն, պատասխանողը գտնվում է հետախուզման մեջ, գործին մասնակցող իրավաբանական անձը վերակազմակերպվում է, դատարանը դիմում է ՀՀ Սահմանադրական դատարան, երբ գտնում է, որ կիրառման ենթակա օրենքը հակասում է ՀՀ Սահմանադրությանը/ ապա այստեղ հատկապես վիճահարույց է եղել վարույթի կասեցումը, երբ պատասխանողը գտնվել է հետախուզման մեջ, այլ կերպ ասած՝ առկա է քրեական և քաղաքացիական վարույթների փոխհարաբերության հիմնախնդիր: Այսպես, 2006 թվականին ՁԵ-ը և այդք «Մ» ՍՊԸ-ից Գ. փ. թիվ 15 հասցեում գտնվող շենքում գնել են բնակարաններ: Ըստ նախավճարային պայամանագրի՝ նշված ՍՊԸ-ն ստացել էր բնակարանի վաճառքի 30%-ի չափով գումար: Հիմնական պայմանագրի կնքման պահին դիմումատուները տեղեկացվել են, որ ՍՊԸ-ի տնօրենը հափշտակել է գումարները և դիմել փախուստի: Դիմումատուների բողոքի հիման վրա իրավապահ մարմինները հարուցել են քրեական գործ: Նրանք «Մ» ՍՊԸ-ից պահանջում են վերադարձնել վճարները, իսկ հիշյալ շենքի իրական սեփականատեր «Ն» ՓԲԸ-ից՝ կնքել հիմնական պայմանագրերը: Հաշվի առնելով, որ ՍՊԸ-ի տնօրենը գտնվում է փախուստի մեջ, քրեական գործով նախաքննությունը կասեցվեց, իսկ քաղաքացիական գործը՝ գումարի բռնագանձման պահանջների վերաբերյալ ըստ դիմումատուների հայցի ընդդեմ «Մ» ՍՊԸ-ի, դատարանները (այդ թվում՝ վերաքննիչ դատարանը) կասեցնում էին այն պատճառաբանությամբ, որ «Մ» ՍՊԸ-ի տնօրենը փախուստի մեջ է: Միայն 2008 թ. մարտի 26-ին Վճռաբեկ դատարանը որոշեց՝ *Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ դատարանի որոշումը, չի նշել այն հանգամանքները, որոնք էական նշանակություն ունեին կասեցվող քաղաքացիական գործի համար և չէին կարող*

հաստատել տվյալ գործի քննության ընթացքում: Ավելին, քաղաքացիական գործով վարույթը կասեցվել է այն հիմքով, որ ընկերության տնօրենը գտնվել է հետախուզման մեջ, մինչդեռ հայցը հարուցված է եղել ընկերության, այլ ոչ թե նրա տնօրենի դեմ:

Վճռաբեկ դատարանը արձանագրեց իրավաբանական անձի և նրա ղեկավարի՝ ֆիզիկական անձի ինքնուրույն իրավասուբյեկտությունը, մասնավորապես՝ քրեական գործը հարուցվում է տնօրենի, իսկ քաղաքացիական գործը կազմակերպության նկատմամբ: Բացի այդ, դատարաններին վարույթը կասեցնելիս պարտավորեցրեց մատնանշել այն հանգամանքները, որոնք հիմնավորում են հայեցողական հիմքով վարույթի կասեցման անհրաժեշտությունը:

2.3. Գործի քննության բացառում

Հայցադիմումի/դիմումի ընդունումը մերժելու ինստիտուտի կիրառում

Դատավորը պարտավոր է վարույթ ընդունել քաղ. դատ. օր.-ով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացված հայցադիմումը: Քաղ. դատ. օր.-ի 90 հոդվածի 3-րդ մասը սահմանում է, *որ դատավորը, սույն օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով, հայցադիմումն ստանալու օրվանից եռօրյա ժամկետում հայցադիմումի ընդունումը չմերժելու կամ դիմումը չվերադարձնելու դեպքում կայացնում է դա ընդունելու մասին որոշում, որում նշվում են նաև գործի քննության ժամանակը և վայրը:* Եթե հայցադիմումի վերադարձումը հետաձգում է վարույթի ընդունման հարցը, հնարավորություն տալով անձին թերությունները շտկելու դեպքում նորոգել քաղաքացիական գործով վարույթը, ապա հայցադիմումի/դիմումի ընդունումը մերժելու դեպքում անձը փաստորեն զրկվում է իր իրավունքների/օրինական շահերի դատական պաշտպանության հնարավորությունից:

Քաղ. դատ. օր.-ի 91 հոդվածը հատակ սահմանում է հայցադիմումի/դիմումի ընդունումը մերժելու հիմքերը (վեճը ենթակա չէ

դատարանում քննության; նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ; այլ դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ գործ; նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է արբիտրաժային տրիբունալի վճիռ, կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշում, բացառությամբ դատարանի կողմից արբիտրաժային տրիբունալի վճռի կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալը մերժելու դեպքի: Դրանք որպես կանոն վերաբերում են այն դեպքերի, երբ արդեն իսկ առկա է հարցը լուծող ակտ կամ ընթանում է գործով այլ վարույթ: Հարկ ենք համարում այստեղ անդրադառնալ հայցադիմումի/դիմումի ընդունումը մերժելու այն դեպքերին, ըստ որի վեճը ենթակա չէ առհասարակ դատարանի քննությանը:

Քաղաքացիական մի գործով 1912 թվականին ծնված ՎԱ, 1929թ. լինելով անչափահաս (17 տարեկան), գտնվել է ավագ եղբոր՝ ԽՎ-ի խնամքի տակ և հանդիսացել է նրա ընտանիքի անդամը: 1929թ. ԽՎ-ը ընտանիքով արտադատարանական կարգով քրեական պատասխանատվության է ենթարկվել և աքսորվել է Քյալազարիս (այժմյան Արմավիրի մարզի Շենավան) գյուղից: Ընտանիքի բոլոր անդամները զրկվել են ընտրական իրավունքից, որը վերականգնվել է միայն 1941 թվականի համընդհանուր համաներման արդյունքում:

ՀՀ-ում բռնադատված ճանաչելու իրավասությունը վերապահված է ՀՀ Գլխավոր դատախազությանը, որն, ըստ ՎԱ ժառանգորդների, առաջնորդվում էր մեկ սկզբունքով՝ առկա է կոնկրետ քրեական գործ, կտրվի բռնադատվածի կարգավիճակ՝ անտեսելով 1994թ. «Բռնադատվածների» մասին օրենքում որպես բռնադատվածի կարգավիճակի ճանաչման հիմք հանդիսացող արտադատարանական կարգով քրեական պատասխանատվության ենթարկելը, ինչպես նաև

որպես բռնադատվածի ընտանիքի անդամ աքսորվելու փաստը⁹: Այս գեկույցում տվյալ գործին անդրադառնալը պայմանավորված է նրանով, որ բռնադատված ճանաչված անձի ժառանգներին օրենքով սահմանված կարգով տրամադրվում էր հողատարածք, վարկեր և այլ գույքային իրավունքներ:

ՎԱ ժառանգները, դիմելով ՀՀ Գլխավոր դատախազություն, նշել էին, որ 2004թ. դեկտեմբերի 27-ին Երևանի «Կենտրոն» և Նորք-Մարաշ» համայնքների առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է ՎԱ-ի 1929թ. Շենավան գյուղից աքսորման ժամանակ մեծ եղբոր՝ ԽՎ-ի ընտանիքի անդամ հանդիսանալու փաստը: Չնայած դրան, 2005թ. ապրիլի 4-ի և հունիսի 2-ի ՀՀ Գլխավոր դատախազության բացասական պատասխանների հիմքում նույն պատճառաբանությունն է՝ *ՎԱ-ին բռնադատված ճանաչելու և համապատասխան տեղեկանք տալու հիմքեր արխիվային անհրաժեշտ տվյալներ չկան*, այլ կերպ ասած՝ բացակայում է որևէ քրեական գործ տվյալ անձի կապակցությամբ: 2005թ. հոկտեմբերի 20-ին ՎԱ ժառանգ-իրավահաջորդները դիմել են Երևանի Կենտրոն» և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան՝ ճամաչելու իրենց հոր՝ ՎԱ-ի բռնադատված լինելու փաստը: Առաջին ատյանի դատարանը 2005թ. հոկտեմբերի 26-ի որոշմամբ մերժեց քննության առնելու դիմումը՝ պատճառաբանելով, որ նման գործերը ենթակա չեն դատարանի քննությանը: Դատարանը հղում կատարելով ՀՀ քաղ.

9 «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բռնադատված է համարվում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող նախկին ԽՍՀՄ այն քաղաքացին, քաղաքացիություն չունեցող անձը կամ օտարերկրյա քաղաքացին, որը խորհրդային կարգերի ժամանակաշրջանում նախկին ԽՍՀՄ-ի տարածքում քրեական պատասխանատվության է ենթարկվել արտադատարանական կարգով, անօրինական կարգով ենթարկվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցների, արտաքսվել է նախկին ԽՍՀՄ տարածքից կամ գրկվել քաղաքացիությունից, աքսորվել կամ արտաքսվել է որպես բռնադատվածի ընտանիքի անդամ կամ դատապարտվել է ԽՍՀՄ քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներով:

դատ. օր.-ի 189՝ *իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ դատարանի կողմից քննվող գործերը* վերտառությամբ հողվածին, որը թվարկում է այն դեպքերը, որոնց վերաբերյալ դատարանը կարող է հաստատել իրավաբանական փաստեր, որոշեց՝ *բռնադատված ճանաչելու փաստը սահմանված չէ այս ցանկում, իսկ «Բռնադատվածների մասին» օրենքով այս հարցի լուծումը վերապահված է Գլխավոր դատախազությանը*: ՎԱ ժառանգները երեք օրում բողոքարկեցին առաջին ատյանի դատարանի որոշումը Վճռաբեկ դատարան, որը 2005թ. նոյեմբերի 18-ի որոշմամբ անփոփոխ թողեց առաջին ատյանի դատարանի որոշումը:

Հարկ է նկատել, որ «Բռնադատվածների մասին» օրենքը ընդունվել է 1994 թվականին, որից հետո միայն 1995-ին ընդունվեց ՀՀ Սահմանադրությունը, որը սահմանում է անձի իրավունքների դատական պաշտպանության իրավունքը: Փաստորեն, ՀՀ քաղ. դատ. օր.-ով սպառնչ կերպով այս փաստերի շրջանակի սահմանումը անձին զրկում է իր իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանության իրավունքից: Այսքանով հանդերձ, դատարանները ձեռնպահ մնացին անմիջականորեն ՀՀ Սահմանադրությունը կիրառելուց՝ չընդունելով նմանատիպ գործերը իրենց վարույթ:

Գործին մասնակից չդարձված անձի բողոքի վերադարձում

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քաղաքացիական իրավունքների և պարտականությունների առնչությամբ ծագած վեճերով արդար դատաքննության իրավունքի սպառնված տեսանկյունից իր նախադեպային իրավունքում առանձնացնում և պարզաբանում է այդ իրավունքի կարևոր բաղադրիչների՝ կողմերի հավասարության և մրցակցային դատավարության պահանջների էությունը: Դատավարության յուրաքանչյուր կողմին պետք է ընձեռել պատշաճ հնարավորություն ներկայացնելու իր գործը /ներառյալ՝ ապացույցները/ այնպիսի պայմաններում, որոնք նրա համար մյուս կողմի համեմատությամբ չեն ստեղծի անբարենպաստ վիճակ: Այդ

նպատակով որպես կանոն արդարադատության կառավարման ոլորտում օրենսդիրը նախատեսում է որպես բեկանման հիմք՝ գործին մասնակից չդարձված անձի կողմից վերաքննիչ բողոքի բերում, եթե կայացվել է իր իրավունքների և պարտականությունների վերաբերյալ գործն ըստ էության լուծող դատական ակտ: Ընդ որում, ելնելով կրկին արդարադատության կառավարման շահերից, որպես կանոն սահմանվել են ժամկետներ, որի ընթացքում անձն իրավունք ունի բերել նման բողոք: ՀՀ Քաղ. դատ. օր.-ի 207 հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ *գործին մասնակից չդարձված այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, իրավունք ունեն վերաքննիչ բողոք բերելու այն օրվանից սկսած՝ երեք ամսվա ընթացքում, երբ իմացել են կամ կարող էին իմանալ նման դատական ակտի կայացման մասին, բացառությամբ այն դեպքերի, երբ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է քսան տարի:*

Անձը փաստորեն պետք է ապացուցի միայն, որ բաց չի թողել սահմանված ժամկետը, այլ կերպ ասած՝ ծանոթացել դատական ակտի գոյությանը վերջին երեք ամսվա ընթացքում: Հակառակ դեպքում, պետք է վերաքննիչ բողոքի հետ միաժամանակ միջնորդություն ներկայացնի բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու վերաբերյալ: Այս առումով արտասովոր էր 2008 թվ-ին վերաքննիչ դատարանում քննված հետևյալ գործը, որը բեկանվեց հետագայում Վճռաբեկ դատարանի կողմից, սակայն առնվազն պետք է առաջացներ դատավորների կարգապահական պատասխանատվություն: Տվյալ գործով Դավթաշեն 4 թաղում տարածքի սեփականատեր ԱՄ-ը դիմել էր կադաստրի պետական կոմիտեի Դավթաշենի տարածքային ստորաբաժանում իրեն պատկանող գույքը կալանքի կամ գրավի տակ չլինելու մասին տեղեկանք ստանալու նպատակով: 2008 թ. մարտի 12-ի գրությամբ քաղաքացին ստացավ մերժում և կից նրան ներկայացվեց առաջին ատյանի դատարանի կողմից 2005 թվականին կայացրած վճիռ: Նրան հայտնի դարձավ, որ չորս տարվա տիրապետումը հիմք ընդունելով՝ առաջին ատյանի դատարանը

ճանաչել է այլ անձի /Հ/ կողմից նշված տարածքը սեփականության իրավունքով տիրապետելու փաստը: Այդ վճիռը հիմք էր հանդիսացել Կադաստրի նշված ստորաբաժանման կողմից Հ-ին սեփականության իրավունքի վկայական տալու համար: Ընդ որում, ըստ գործի նյութերի ԱՄ-ն իբրև թե այլևս չի բնակվում ՀՀ-ում, ուստի նա պատշաճ չի ծանուցվել իրեն սեփականության իրավունքով պատկանող տարածքի նկատմամբ այլ անձի կողմից սեփականության իրավունքով տիրապետելու փաստը քննարկելու դատական նիստի մասին:

ԱՄ-ն՝ որպես գործին մասնակից չդարձված անձ, ում իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է դատական ակտ՝ գրկելով նրան ՀՀ քաղ. դատ. օր.-ի 27-29, 48, 49 հոդվածներով սահմանված դատավարական իրավունքների և պարտականությունների իրացումից, ներկայացրեց վերաքննիչ բողոք: Վերաքննիչ դատարանը վերադարձրեց վերաքննիչ բողոքը նախ այն պատճառաբանությամբ, որ այն բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, մինչդեռ ԱՄ միջնորդություն չի ներկայացրել բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ: Մյուս կողմից Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի որոշման մեջ նշվել էր, որ *բողոքը ներկայացրել է այն անձը, ով ստորադաս դատարանի դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի*: Այլ կերպ ասած՝ քանի որ կայացված ակտի հիմքում ընկած է եղել սեփականության իրավունքով տիրապետման փաստը ճանաչելու մասին դիմումը՝ ուստի որևէ այլ անձ չի կարող հանդես գալ որպես գործի ելքով շահագրգռված անձ: Փաստորեն, վերաքննիչ դատարանը նախ ճիշտ չհաշվարկեց, որ վճիռը ԱՄ-ին գրավոր ներկայացվել է միայն 2008 թ. մարտին, որի դեմ վերաքննիչ բողոք բերել է նույն տարվա ապրիլ ամսին՝ պահպանելով օրենքով սահմանված եռամսյա ժամկետը: Մյուս կողմից, դատարանի ընկալմամբ առաջին ատյանի դատարանի ակտը, որը հիմք է հանդիսացել գրկելու քաղաքացուն իր սեփականության իրավունքից, չի շոշափում վերջինիս իրավունքներն ու օրինական շահերը:

Վճռաբեկ դատարանը վերացրեց վերաքննիչ դատարանի ակնհայտ անօրինական ակտը: 2008 թ. հունիսի 27-ի որոշման մեջ

արձանագրեց, որ ԱՄ-ն գործի քննությանը մասնակից չի դարձվել և գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ դատական ակտն հանձնվել է նրան: Վերաքննիչ դատարանը գնահատման առարկա չի դարձրել ԱՄ-ի վերաքննիչ բողոքում նշված այն պատճառաբանությունը, որ վիճարկվող դատական ակտի մասին տեղեկացել է Կադաստրի 13.08.2008 թվականի տեղեկանքից և նշված դատական ակտի դեմ, որպես գործի քննությանը մասնակից չդարձած անձ վերաքննիչ բողոք է ներկայացրել ՀՀ քաղ. դատ. օր.-ի 207-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված ժամկետում, իսկ այդ ժամկետում վերաքննիչ բողոք ներկայացնելիս օրենսդիրը վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը ճանաչելու միջնորդություն ներկայացնելու պահանջ չի սահմանում (ՀՀ քաղ. դատ. օր.-ի 207-րդ հոդվածի 6-րդ կետ): Միաժամանակ, ըստ Վճռաբեկ դատարանի՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ինչպես գործում առկա Կադաստրի տեղեկանքով, այնպես էլ վերաքննիչ բողոքին կից ներկայացված տեղեկանքներով վիճելի տարածքի նկատմամբ գրանցված է եղել ԱՄ-ի սեփականության իրավունքը, իսկ այդ իրավունքի գրանցումը վերացել է վիճարկվող դատական ակտի ուժով, այսինքն՝ առաջին ատյանի դատարանի բողոքարկվող դատական ակտը կայացվել է ԱՄ-ի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, մինչդեռ վերջինս գործի քննությանը մասնակից չի դարձել: Այս հիմքով Վճռաբեկ դատարանը Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի որոշումը վերացրեց:

Ի տարբերություն վերը նշված դեպքի, երբ վճռաբեկ դատարանը վերացրեց ակնհայտ անօրինական դատական ակտը, դատական պրակտիկայում հանդիպում են գործեր, երբ սեփականության իրավունքի ճանաչման/դադարման գործերով նախկին սեփականատիրոջ բացակայությամբ ստորադաս դատական ատյանի կայացրած որոշումները այդպես էլ չեն շտկվում: Այսպես, Ա-ը հանդիսացել է ք. Երևան, Ա. փողոցում գտնվող բնակարանի սեփականատերը: 2005թ. Մ. դիմել էր դատարան՝ պահանջելով դադարեցնել Ա-ի սեփականության իրավունքը նշված հասցեում գտնվող բնակարանի նկատմամբ: Մալաթիա և Սեբաստիա

համայնքների ընդհանուր իրավասության դատարանի վճռով հայրը բավարարվել է: Պատասխանող Ա-ը քաղաքացիական գործի քննության ընթացքում չի ստացել ծանուցագիր դատական նիստերի մասին և չի ստացել վճիռը: Ըստ դատարանի նրա գտնվելու վայրը անհայտ է եղել: Այդ հիմքով գրություն է ուղղվել Մալաթիա և Սեբաստիա համայնքի թաղապետարան, որի պատասխանին չսպասելով, հենց հաջորդ օրը դատարանը նիստ է հրավիրել և նույն օրը հրապարակել վճիռ: Դատարանը կիրառել է ՀՀ քաղ. օր.ի 187, 280-րդ հոդվածները և այդ հոդվածների հիմքով ճանաչել էր Մ-ի սեփականության իրավունքը, այն դեպքում, երբ վերջինս ներկայացրել էր ընդամենը 3 տարվա կոմունալ վճարումների կտրոններ և համատիրությունից տեղեկանք՝ 1994 թվականից այդ հասցեում բնակվելու և կոմունալ վճարումները կատարելու մասին:

Վերաքննիչ դատարանի 2008 թ. որոշմամբ Ա-ի իրավահաջորդների վերաքննիչ բողոքը մերժվել է: Վերաքննիչ դատարանի կողմից պարզապես անտեսվել են այն խախտումները, որ պատասխանողը գործի քննության ժամանակ ծանուցված չէր եղել դատական նիստի մասին և հնարավորություն չէր ունեցել ներկա գտնվել գործի քննությանը: Այնինչ, Վճռաբեկ դատարանը, կոչված լինելով իրավունքի միատեսակ կիրառության ապահովմանը, բազմիցս փաստել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 78-րդ հոդվածով նախատեսված՝ դատական նիստի ժամանակի և վայրի մասին դատարանի՝ նրանց տեղեկացնելու պարտականությունն ուղղակիորեն կապված է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված օրենքի առջև բոլորի հավասարության համընդհանուր սկզբունքի և դրանից բխող ու ՀՀ քաղաքացիական դատավարության համընդհանուր սկզբունքի և դրանից բխող մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքների հետ:

Այնհայտ անհիմն վճիռների «անձեռնմխելիությունը»

Առավել վիճելի է իրականացվող քրեական քաղաքականությունը դատավորի կողմից իր պարտականությունների ոչ պատճառ

կատարման, անփութության դրսևորման, «գիրքի չարաշահման» և նմանատիպ դեպքերում: ՀՀ օրենսդրությունը նախատեսում է պատասխանատվության երկու տեսակ՝ կարգապահական և քրեական: ՀՀ դատական օրենսգրքի 153 հոդվածի համաձայն՝ *«Դատավորի կարգապահական պատասխանատվության հիմքերն են նյութական և/կամ դատավարական նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումը, դատավորի վարքագծի կանոնների կոպիտ կամ պարբերաբար խախտումը և այլն:* Իսկ այն դեպքում, երբ դատավորը շահաղիտական կամ անձնական այլ դրդումներով կայացնում է ակնհայտ անարդար դատական ակտ, ՀՀ քր. օր.-ի 352 հոդվածով նախատեսվում է դատավորի քրեական պատասխանատվությունը: Դատական ակտը անարդար է համարվում, եթե ակնհայտորեն չի համապատասխանում գործող օրենսդրությանը /իրավաբանական չափանիշ/ կամ ակնհայտորեն հակասում է գործի փաստական հանգամանքներին: Ակնհայտ անարդար դատական ակտեր կայացրած դատավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու դեպքերում առաջանում է նրանց կայացրած ակտերի բեկանման անհրաժեշտությունը: Այս հարցը որպես կանոն լուծվում է նոր երևան եկած հանգամանքի հիման վրա վարույթի նորոգման ինստիտուտի միջոցով: ՀՀ օրենսդրությունը, տվյալ դեպքում ՀՀ քաղ. դատ. օր.-ի 204¹¹-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է, որպես վարույթի վերանայման համար նոր երևան եկած հանգամանք՝ *դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված է գործին մասնակցող անձանց կամ նրանց ներկայացուցիչների կամ դատավորի գործի քննության հետ կապված հանցավոր արարք կատարելու փաստը:*

Վիճահարույց է վերջերս ընդունված ՀՀ դատական օրենսգրքի 13 հոդվածի 6-րդ մասում դատավորների անկախությունը երաշխավորող հետևյալ դրույթի նախատեսումը՝ *դատավորի կողմից շահաղիտական կամ անձնական այլ դրդումներով ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելու փաստի առթիվ քրեական հետապնդում չի կարող հարուցվել, եթե այդ ակտը վերադաս դատարանի կողմից բեկանված չէ:* ՀՀ

օրենսդրությամբ նախատեսված վերը նշված դրույթը, ըստ էության ամրագրեց դատավորների անպատժելիությունը, քանի որ ակնհայտ անօրինական ակտը բեկանելու համար անհրաժեշտ է դատավորի առնչությամբ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, մյուս կողմից՝ դատավորին հնարավոր է ակնհայտ անարդար ակտ կայացնելու համար ենթարկել քրեական պատասխանատվության, եթե տվյալ ակտը բեկանվել է վերադաս դատարանի կողմից: Ստեղծվում է փակուղի իրավիճակ, որի արդյունքում քր. օր.-ի քննարկվող հոդվածը դառնում է ինքնուրունաբար /առանց այլ հանցագործության առկայության/ անկիրառելի, քաղաքացին զրկվում է ակնհայտ անարդար ակտերի իրավական հետևանքների վերացման ուղղությամբ արդարադատություն ստանալու իրավունքից: Այսպես քաղաքացիական մի գործով ԳՀ-ը Երևանի Արովյան 1/2 հասցեի 18.9 քմ մակերեսով տան սեփականատեր էր, իսկ 19,3 քմ մակերեսով հողամասի նկատմամբ ունեցել է օգտագործման իրավունք: Նրա որդին ՀՊ-ը, որը 2002թ. հունիսի 6-ին գորակոչվել է ՀՀ բանակ, եղել է հաշվառված նշված հասցեում: Երևանի Կենտրոն համայնքի թաղապետը, հանդես գալով Երևանի քաղաքապետի անունից, ԳՀ-ի հետ կնքել է առուվաճառքի պայմանագիր՝ իրացնելով տունը Հյուսիսային պողոտայի կառուցապատման համար: Հայցվորները, հաշվի առնելով, որ ՀՊ-ի բնակ. տարածության օգտագործման իրավունքը անտեսվել է և նրան այդ իրավունքի իրացման համար փոխհատուցում չի տրվել՝ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2001թ. հոկտեմբերի 05-ի թիվ 950 որոշումը, համաձայն որի՝ *իրացնողը պարտավոր է անշարժ գույքի և հողամասը տիրապետող, օգտագործող անձանց հետ կնքել իրացվող անշարժ գույքը վերցնելու և դրա դիմաց փոխհատուցում տալու վերաբերյալ պայմանագիր*, դիմել էր Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան՝ պահանջով պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանին տրամադրել ՀՊ-ին համապատասխան փոխհատուցում: Առաջին ատյանի դատարանը 2004թ. հունվարի 27-ի վճռով հայցը

մերժել է10: Չնայած, ՀՀ բնակարանային օրենսգրքի 59, ինչպես նաև «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածները սահմանում են, որ *ժամկետային զինծառայողներն իրենց զբաղեցրած բնակելի տարածության նկատմամբ իրենց իրավունքները՝ անկախ սեփականության ձևից և գերատեսչության ենթակայությունից, պահպանում են ծառայության ընթացքում*: Վճռաբեկ դատարանը կողմերի միջև կնքված և նոտարական կարգով վավերացված պայմանագրի առկայության և դրա պայմանների կատարման պայմաններում նյութական և դատավարական իրավունքի խախտման մասին վճռաբեկ բողոքի պատճառաբանությունները գտավ անհիմն: 2005թ. հունվարի 20-ի որոշմամբ հայցվորների վճռաբեկ բողոքը քողովեց առանց բավարարման:

Ի պատասխան ՀՀ արդարադատության նախարարությանն ուղղված հայցվորների դիմումի՝ ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի վերահսկողության վարչության պետը 2009թ. փետրվարի 16-ի գրությամբ հայտնեց, որ *«2004թ. հունվարի 27-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի, 2004թ. նոյեմբերի 16-ին ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի և 2005թ. հունվարի 20-ի ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և տնտեսական գործերով պալատի դատավորներն արդարադատություն իրականացնելիս թույլ են տվել նյութական օրենքների նորմերի խախտումներ: Սակայն խախտումներ թույլ տված դատավորների նկատմամբ չի կարող հարուցվել կարգապահական վարույթ, քանի որ լրացել է ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու առավելագույն ժամկետը»¹¹:*

¹⁰ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը 2004թ. նոյեմբերի 16-ի վճռով հայցը մերժեց:

¹¹ Նույն խնդրի առնչությամբ մեկ այլ գործով Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2003թ. հունիսի 24-ին կայացված վճռով բավարարեց հայցը և

Վճռաբեկ դատարան դիմելով՝ ՀՊ և ԳՊ-մները հայտնել են, որ փոխհատուցման գումարը ճիշտ չի հաշվարկվել և չի փոխհատուցվել նշված հասցեում հաշվառված ՀՊ-ի բնակելի տարածության օգտագործման իրավունքը, այդ իսկ պատճառով նոր երևան եկած հանգամանքների հիմքով պահանջել են Վճռաբեկ դատարանից վերանայել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 2004 թ. նոյեմբերի 16-ի վճիռը և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և տնտեսական գործերով պալատի 2005 թվականի հունվարի 20-ի որոշումը: Ըստ վճռաբեկ դատարանի 2009 թ. որոշման՝ ՀՀ քաղ. դատ. օր.-ի 204¹¹-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ *նոր երևան եկած հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե բողոք ներկայացրած անձն սպացուցում է, որ այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին էլ կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, կամ այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան և այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն*: Վճռաբեկ բողոք բերած անձիք որպես նոր երևան եկած հանգամանք ներկայացրել են ՀՀ արդարադատության նախարարության 16.02.2009 թվականի եզրակացությունը և այդ եզրակացությանը կից գեկուցագիրը: Նշված եզրակացությունը և դրան կից գեկուցագիրը վերաբերում են «դատարանների կողմից գործի քննության ընթացքում թույլ տված խախտումներին»: Վճռաբեկ դատարանը այն համարեց գործի լուծման հետ առնչություն չունեցող եզրակացություն: Վճռաբեկ դատարանը գտավ, որ Վերաքննիչ դատարանի 16.11.2004 թվականի վճիռը և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և տնտեսական գործերով պալատի 20.01.2005թ. որոշումը վերանայելու համար ՀՀ արդարադատության նախարարության 16.02.2009թ. եզրակացությունը և դրան կից

պարտավորեցրեց զինվորական ծառայության մեջ գտնվող անձին հատուցել իր բնակ. տարածության իրավունքի դիմաց:

12.02.2009 թվականի գեկուցագիրը սույն գործի լուծման համար էական նշանակություն չունեն և նոր երևան եկած հանգամանք չեն: Այս պատճառաբանությամբ Վճռաբեկ դատարանը իրավացիորեն որոշեց վճռաբեկ բողոքը վերադարձնել:

Այնուամենայնիվ ստեղծվեց մի իրավիճակ, երբ քաղաքացիները գրկված են ակնհայտ սխալ/անարդար դատական ակտերը «շտկելու» հնարավորությունից, ինչը փաստորեն ոտնահարում է անձի՝ դատական պաշտպանության իրավունքը, արդարադատության մատչելիությունը: Որպես լուծում անհրաժեշտ է վերացնել դատական օրենսգրքով սահմանված քննարկվող պայմանը, կամ այն փոխարինել այլ երաշխիքով. օրինակ՝ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համար պահանջել Արդարադատության խորհրդի դրական եզրակացությունը:

Քրեական և քաղաքացիական վարույթների փոխհարաբերակցության ընկալումը

Քրեական և քաղաքացիական վարույթների փոխհարաբերակցության ոչ ճիշտ ընկալումը կարող է գրկել անձին հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման կամ հարակից /հանցագործության հետ անհրաժեշտ առնչություն չունեցող/ քաղաքացիական վեճերով քաղաքացիական դատավարությամբ շրջանակներում արդարադատություն հայցելու իրավունքից: ՀՀ քր. դատ. օր-ի 155 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *նույն քաղաքացիական հայցով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշումը, հայցից քաղաքացիական հայցվորի հրաժարվումն ընդունելու կամ հաշտության համաձայնությունը հաստատելու մասին դատարանի որոշումը, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռի առկայությունը, որով հայցը մերժվել կամ լրիվ կամ մասնակի բավարարվել է, բացառում է քաղաքացիական հայցի հարուցումը:*

2007 թվականին քննված մի գործով փաստաբան Բ-ը, գործելով իր վստահորդների անունից, կնքում է հաշտության

պայմանագիր և ստանում գումարը: Նա այդ մասին չի տեղեկացնում վստահորդներին և գումարը փոխանցում է գործընկերոջը՝ Ա-ին: Վերջինս հափշտակում է այն և դատապարտվում խաբողության համար: Դատավճռով քննարկվել է նաև վստահորդների (տուժողների) քաղաքացիական հայցը ընդդեմ Ա-ի: Այնուհետև տուժողները քաղաքացիական դատավարության կարգով քաղ. հայց ներկայացրեցին իրենց փաստաբան Բ-ի դեմ՝ պահանջելով հատուցել վերջինիս անփութության հետևանքով պատճառված վնասը:

Դատարանը պետք է պարզեր, թե ինչպիսի քաղաքացիական հայց է քննվել քրեական գործի շրջանակներում, որը այլևս ենթակա չէ քննության նոր քաղաքացիական հայցի հիման վրա: Քրեական դատավարության շրջանակում ապացուցման ենթակա էր փաստաբան Բ-ի և գործընկերոջ Ա-ի միջև չարամիտ համաձայնության առկայության հարցը: Քանի որ քրեական գործը քննող դատավորը գտավ, որ բացակայում է չարամիտ համաձայնությունը երկուսի միջև, հետևաբար, նա իրավունք չուներ և չանդրադարձավ փաստաբանի կողմից իր քաղաքացիա-իրավական պարտականությունների կատարման նկատմամբ դրսևորած անփութության հետևանքով պատճառված վնասին: Ուստի, վստահորդը 2007 թվականի հոկտեմբերին դիմեց «քաղաքացիական գործով դատավորին», որպեսզի իր լիազորված անձի՝ փաստաբան Բ-ի կողմից ներկայացուցչի պարտականությունների ոչ պատշաճ կատարման հետևանքով պատճառված վնասի հատուցում ստանա: Վերջինս, կնքելով համաձայնագիրը, ոչ միայն չտեղեկացրեց վստահորդին, այլև չլինելով լիազորված նրա կողմից, նրա բաժնեմասը հանձնեց իր գործընկերոջը: Սա վկայում է նրա պարտականությունների ոչ պատշաճ կատարման մասին, որը և ենթակա է քննարկման քաղաքացիական դատավարության շրջանակում:

Քաղաքացիական գործը քննող դատավորը ճիշտ չընկալեց այս երկու դատավարությունների առարկաների տարբերությունը, խառնեց քրեական և քաղաքացիական դատավարություններին ենթակա հանգամանքների առարկան: Նա վճռեց, որ

քաղաքացիական հայցի հարցը արդեն իսկ լուծվել է գործընկերոջը քրեական պատասխանատվությանն ենթարկելիս: Ծագում է տրամաբանական հարց. ո՞ր քաղաքացիական հայցը: Միանշանակ լուծվել է տուժողների քաղաքացիական հայցը Ա-ի նկատմամբ, որի հիմքում նրա կատարած հանցագործությունն է, սակայն պայմանագրային (ներկայացուցչի) իրավահարաբերություններից բխող պահանջները վատահորդը իր ներկայացուցչի փաստաբան Բ-ի դեմ կարող է ներկայացնել քաղաքացիական գործեր քննող դատարանին, որից նրան զրկեց առաջին ատյանի դատարանը, իսկ սպա նաև Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը:

Անհրաժեշտ է համապատասխան թրենինգներ իրականացնել քրեական և քաղաքացիական դատավարությունների առարկաները սահմանազատելու, դրանց փոխահարաբերությունը պարզելու, օրինակների տեսքով ցույց տալ քրեական դատավարության շրջանակներում քննվող հայցերի բնույթը /ում դեմ, ում կողմից, ինչի հիման վրա/, հարակից հնարավոր հայցերի հարուցման դեպքերը: Հակառակ դեպքում քաղաքացիական հայցեր, որոնք թվում է թե քննարկվել են քրեական դատավարության շրջանակներում, մերժվում են քննարկման առարկա դառնալուց քաղաքացիական դատավարության կարգով՝ անձին զրկելով արդարադատություն հայցելու իր սահմանադրական իրավունքից:

2.4. Քաղաքացիական/վարչական ինստիտուտների խառնաշփոթը «գույքի հարկադիր օտարման» գործընթացում

«Էքսպրոպրիացիոն» պայմանագրերի դատական որակումը

ՀՀ սահմանադրական դատարանի 18.04.2006 թվականի ՍԳՈ-630 որոշմամբ ՀՀ քաղաքացիական և հողային օրենսգրքերի այն բոլոր նորմերը, որոնք մինչ այդ հիմք էին ծառայել Երևանի «Կենտրոն» համայնքում պետական կարիքների համար հողամասերը և դրանց վրա գտնվող անշարժ գույքերը սեփականատերերից վերցնելու համար, ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող: Հիմք

ընդունելով ՀՀ ՍԳ նշված որոշումը՝ օտարված սեփականությունների նախկին սեփականատերերը դիմել էին դատարաններին «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի հետ կնքված անշարժ գույքի առուվաճառքի «պայամանագրերը» անվավեր ճանաչելու պահանջով: Տարբեր պատճառաբանություններով այսօրինակ բոլոր հայցադիմումներ մերժվել են:

Օրենքի բացերի պայմաններում պայմանագրերի մեծ մասը կնքվել էին դատական կարգով: Ընդ որում, դատարանները սեփականատերերի գույքը *օտարված համարելու* փոխարեն հարկադրել էին սեփականատերերին կնքել անշարժ գույքի օտարման մասին պայմանագրեր՝ հիմք ընդունելով քաղ. օր.-ի 461 հոդվածը՝ *եթե կողմը, ում համար օրենքին համապատասխան պարտադիր է պայմանագիր կնքելը, խուսափում է այն կնքելուց, մյուս կողմն իրավունք ունի դատարան դիմել՝ պայմանագիրը կնքելուն հարկադրելու պահանջով*¹²: Այլ կերպ ասած՝ հասարակության և պետության կարիքների համար դատական կարգով գույքը օտարելիս՝ դատարանները կիրառել են ՀՀ քաղ. օր.-ի պայմանագրային հարաբերությունները կարգավորող նորմերը՝ պարտավորեցնելով սեփականատերերին կնքել օտարման մասին պայմանագիր: Այսպես, Երևանի Լալայանց փ. թիվ 5 տան սեփականատերեր Ջ և ՋԱ-ները, դիմելով դատարան, պահանջեցին անվավեր ճանաչել 21.02.2004 թ-ին «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի հետ կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը: Երևանի քաղաքացիական դատարանի 05.09.2008 թ. վճռով հայցը մերժվեց¹³: Սույն գործով վճռաբեկ բողոքը 03.06.2009 թվականի որոշմամբ վերադարձվեց հետևյալ պատճառաբանությամբ՝ «Վերաքննիչ դատարանը, որպես իրավական հիմք ընդունելով ՀՀ քաղ. օր.-ի 128-րդ հոդվածի 1-ին կետը,

¹² ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 2005թ. թիվ 05-3257 գործով վճիռ:

¹³ Նմանապես ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը 29.12.2008 որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվեց:

ըստ որի՝ ՀՀ-ը և համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով, գտել է, որ պետությունը /ի դեմս նրա անունից հանդես եկող պետական մարմինների/ ևս կարող է մասնակցել քաղաքացիաիրավական հարաբերություններին և կնքել համապատասխան գործարքներ: Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վերաքննիչ բողոքի այն դիրքորոշմանը, որ սույն գործով վիճելի իրավահարաբերությունը հիմնված է եղել վարչական մարմինների՝ հանրային իրավունքի բնագավառում իրականացված հողամասը պետական կարիքների համար վերցնելուն ուղղված գործունեության վրա, գտել է, որ սույն գործով վիճարկվող պայամանագրի կնքումը բողոքաբերի կողմից նշված հանգամանքի հիման վրա դեռ չի նշանակում, որ պայամանագրի կնքման հետ կապված հարաբերությունները դադարում են քաղաքացիաիրավական լինելուց»: Արդյո՞ք նման հարաբերությունները պետք է որակել որպես քաղաքացիաիրավական, այդ թվում՝ պայամանագրային¹⁴: Քաղ. օր.-ի 28 գլխի վերլուծությունը ցույց է տալիս, որ քաղաքացիաիրավական պայմանագիրը ունի կարևորագույն պայման՝ պայմանագրի ազատություն, որի բացակայության պարագայում պայմանագիրը կկորցնի իր իրավական էությունը և կդադարի պայմանագիր կոչվելուց: Քաղաքացիական իրավունքի կարևորագույն սկզբունքներից է մասնավոր կամքի ինքնավարության սկզբունքը, որը պայմանագրային իրավունքում կոնկրետացվում է պայմանագրի ազատության սկզբունքով: Մասնավոր կամքի ինքնավարության սկզբունքը կայանում է կողմերի ինքնավար՝ ազատ և ինքնուրույն կամք դրսևորելու մեջ: Մասնավոր իրավունքի յուրաքանչյուր սուբյեկտ

¹⁴ Պայմանագիրը մասնավոր անձանց իրավահարաբերությունների ձևավորման դասական գործիքն է: Պայմանագիր է համարվում երկու կամ մի քանի անձանց համաձայնությունը, որն ուղղված է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարեցնելուն:

մասնավոր իրավահարաբերությունների մեջ մտնում է իր սեփական կամքով և ինքուրույն ընտրում վարքագծի դրսևորման համապատասխան ձևը: Այս սկզբունքին և մասնավոր իրավունքի կարգավորման մեթոդին բնորոշ է նախևառաջ այն, որ մասնավոր իրավահարաբերությունների սուբյեկտները հավասար են՝ անկախ են միմյանցից, օգտվում են հավասար իրավունքներից՝ անկախ այն հանգամանքից հանդես են գալիս նրանք որպես իրավագոր, թե պարտավոր անձ: Այսինքն՝ քաղաքացիական իրավունքի սուբյեկտները դիտարկվում են որպես ինքնուրույն և օրենքի առջև իրավաբանորեն հավասար սուբյեկտներ:

ՀՀ քաղ. օր.-ի 437 հոդվածի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձիք ազատ են պայմանագիր կնքելիս: Պայմանագրի ազատության սկզբունքը իր մեջ է ներառում պայմանագրի առարկայի, կողմի, ձևի, գնի, ... ընտրության ազատությունները, այդ թվում՝ առհասարակ պայմանագրային հարաբերությունների մեջ մտնելու ազատությունը: Պայմանագիր կնքելուն հարկադրելը չի թույլատրվում, բացառությամբ այն դեպքերի, երբ պայմանագիր կնքելու պարտականությունը նախատեսված է քաղ. օր.-ով կամ կամովին ստանձնած պարտավորությամբ: Պայմանագրի կնքման ազատությունը նախ և առաջ նշանակում է, որ պայմանագրի կնքելուն հարկադրել չի թույլատրվում, բացառությամբ այն դեպքերի, երբ պայմանագրի կնքելու պարտականությունը նախատեսված է քաղաքացիական օրենսգրքով: Հետևաբար, եթե կողմերը քաղաքացիաիրավական պայմանագրի կնքման սահմանված կարգով առուվաճառքի պայմանագրի էական պայմանների վերաբերյալ համաձայնություն ձեռք չեն բերել, ապա մի կողմը չի կարող դատական կարգով պարտավորեցնել մյուս կողմին կնքել պայմանագիրը:

Բազմաթիվ դատական գործեր վկայում են, որ կողմերը ծանոթանալով պայմանագրերի պայմաններին, հրաժարվել են կնքել առաջարկվող պայմանագիրը: Այսպես, Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 10.03.2005 թվականի կայացրած վճռի դեմ պատասխանողների կողմից բերված վերաքննիչ

բողոքի հիման վրա Վերաքննիչը դատարանը, քննելով քաղ. գործն ըստ հայցի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ ընդդեմ ՍԲ-ի և ՏԶ-ի՝ հողամասը և դրա վրա գտնվող անշարժ գույքը պետության կարիքների համար վերցնելու պայմանագիր կնքելուն հարկադրելու և զբաղեցրած տարածքից վտարելու պահանջի մասին, կատարված դատաքննությամբ ՀՀ քաղ. գործերով պարզել է, որ «ՀՀ քաղ. օր.-ի 451 հոդվածի համաձայն և ՀՀ կառավարության որոշումների պահանջներով սահմանված կարգով, գույքը վերցնելու կապակցությամբ պատասխանողներից ՍԲ-ին 24.10.04թ. ներկայացվել է գնային առաջարկ համապատասխան հատուցման պայմաններով պայմանագիր կնքելու մասին: ... Պատասխանողները հայտնել են, որ պայմանագիր կնքելու առաջարկի պայմաններն իրենց համար ընդունելի չեն: ... Պատասխանող կողմը հայտնել է, որ հայցվորին ուղղված թվով երեք դիմումներին պատասխան չի տրվել, գույքի գնահատման հաշվետվության պատճեն չեն ներկայացրել, սեփական գույքը գնահատվել է կոպիտ սխալներով և հաշվի չեն առել, որ այն առանձին սեփական տուն է՝ նկուղով ու հողով»: Այնուհանդերձ, ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը վճռել էր հայցը բավարարել:

Հաշվի առնելով օտարման գործընթացի յուրահատկությունները և վերլուծելով օտարման հարցերով կայացված դատական ակտերը՝ կարելի է փաստել, որ օտարման գոտիներում գտնվող գույքի սեփականատերերը առհասարակ ցանկություն չեն ունեցել վաճառել իրենց գույքը, չեն ունեցել պայմանագրի առարկայի և կողմի ընտրության հնարավորություն, առավել ևս պայմանագրի գնի որոշման ազատություն: Այդ թվում՝ պայմանագրերը կնքվել են առանց բանակցային գործընթացների վարման (դիմումատուների պնդմամբ ձեռքբերողները, չընդունելով սեփականատերերի առարկությունները, հրաժարվել են բանակցություններ վարել իրենց հետ): Ավելին, սեփականատիրոջ փոխարեն անշարժ գույքի շուկայական գնահատման հարցերում գնահատվող կազմակերպությանն ընտրել է ձեռքբերողը: Չնայած, ՀՀ

օրենսդրությունը չի արգելում սեփականատիրոջը դիմել այլ անկախ լիցենզավորված գնահատողի և ստանալ նրա հաշվետվությունը, սակայն այլ կազմակերպություններ հրաժարվել են գնահատել Երևանի օտարման գոտիներում գտնվող շինությունը/հողամասը՝ վկայակոչելով ներքին հրամանին, որն արգելել է այդ գոտիներում գնահատման աշխատանքներ կատարել: Արդյունքում այդ ազատությունը գործնականում վերածվել է ֆիկցիայի, իսկ գնահատման գործընթացում ցուցաբերվել կամայական մոտեցումներ:

Հանրային գերակա շահի դեպքում մասնավոր սեփականության օտարման գործընթացը հանրային իրավական գործընթաց է: Դատարանների կողմից այս հարաբերությունների «էքսպրոպրիացիոն» քաղաքացիաիրավական պայմանագրերով որակելը, կարծես, մասնավոր իրավահարաբերությունների չմիջամտման սկզբունքով հանրային իշխանության անօրինական գործողությունների և կամայականությունների քողարկում լինի: Այնինչ, ՀՀ կառավարության՝ հանրային գերակա շահ ճանաչելու մասին որոշումները պետք է ուղղված լինեն ոչ թե օտարման գոտում գույք ունեցող սեփականատերերին, այլ պետական համապատասխան մարմիններին՝ պայմանագրի կնքման վերաբերյալ բանակցությունները սկսելու և վարելու համար՝ պահպանելով պայմանագրի ազատության սկզբունքի տառը: Այսինքն, մասնավոր սեփականության հարկադիր օտարման դեպքում պետությունը պետք է հանդես գա ոչ թե որպես սեփականության իրավունքի սուբյեկտ, այլ որպես հանրային իշխանություն իրականացնող կառույց: Այդ իսկ պատճառով՝ գործող քաղ. օր.-ի 28-31 գլուխները սույն իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի չեն, չնայած դատական պրակտիկայում այն կիրառվում է և կիրառվում է անհարկի:

**Փոխհատուցման գործընթացի նկատմամբ դատական
վերահսկողությունը**

Մարդու իրավունքների պաշտպանի 2006, 2007 և 2008թթ. տարեկան զեկույցներում մանրամասն անդրադարձ է կատարվել Երևանի կառուցապատման ծրագրերի իրականացման կապակցությամբ հասարակության (պետության) կարիքների համար սեփականության օտարման գործընթացին և սեփականության իրավունքի (այդ թվում՝ դատական) պաշտպանության հետ կապված խնդիրներին: Պաշտպանին ուղղված բողոքների մեծ մասը վերաբերում է հենց *փոխհատուցման խնդիրներին*: Ձեռքբերողները, ըստ դիմումատուների, իրենց ներկայացրած առարկությունները չեն ընդունում և հրաժարվում են բանակցություններ վարել փոխհատուցման գնի շուրջ՝ պատճառաբանելով, որ իրենք միայն կառուցապատողներ են: Այս առումով Պաշտպանի 2008թ. զեկույցում արդեն նշվել է, որ օտարվող գույքի սեփականատիրոջ և այլ գույքային իրավունք ունեցողների իրավունքները չեն կարող լիարժեք պաշտպանված լինել, եթե օտարման պայմանագրի կողմը պետությունը չէ: Անհրաժեշտ է, որպեսզի ՀՀ կառավարությունը, մինչև Երևան քաղաքի որևէ տարածք հանրային գերակա շահ ճանաչելը, իսկ Երևանի քաղաքապետը, մինչև դրանք աճուրդի և/կամ մրցույթի ներկայացնելը, մրցույթներին մասնակցող բոլոր ընկերություններից պահանջեն նրանց ֆինանսական կարողությունների կամ միջոցների (ակտիվների) վերաբերյալ տեղեկատվություն, իսկ հետագայում տեղեկություն հաղթող ճանաչված ձեռքբերող ընկերությունը իր ձեռքբերված տարածքի բնակչությանը ներկայացնի իր ֆինանսական կարողությունների կամ միջոցների վերաբերյալ հաշվետվություն, ինչը կարող է երաշխիք հանդիսանալ այդ բնակիչների համար և դրանով վստահություն ներշնչել նրանց մոտ: Ավելին, մասնավոր իրավահարաբերություններում որպես կանոն առկա է ռիսկի գործոնը, այնինչ հանրային իրավական հարաբերություններում այն ի սպառ պետք է բացակայի: Հասարակության և պետության շահերի համար սեփականության օտարման գործընթացը անհրաժեշտ է դիտարկել որպես բացառապես հանրային իրավական հարաբերություններ, այլապես օտարվող սեփականության սեփականատերերը զրկված կլինեն սեփականության օտարման պատճառով իրենց հանդեպ

առաջացած պարտավորությունների պատշաճ կատարման երաշխիքներից: Այսպես, եթե սեփականության օտարման գործընթացը վստահվում է մասնավոր կազմակերպությանը, իսկ ՀՀ-ում ապահովագրական մշակույթը բավականաչափ ցածր մակարդակի վրա է, ապա օտարվող գույքի սեփականատերերն ոչնչով երաշխավորված և ապահովագրված չեն կառուցապատողի անգործությունից, անբարեխիղճ գործողություններից կամ, ասենք, կազմակերպության անվճարունակ ճանաչվելու դեպքում:

Երևանի բնակիչներին ներկայացված հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման պայմանագրերի նախագծերի և արդեն իսկ կնքված պայմանագրերի ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդելու, որ դրանք չեն բխում օտարվող արշարժ գույքի սեփականատերերի և այլ գույքային իրավունքներ ունեցող քաղաքացիների շահերից: Պայմանագրերն իրենց դրույթներով հանդերձ չեն ունեցել սոցիալական ուղղվածություն: Դրանք բխում էին միայն ձեռքբերողի և կառուցապատողի շահերից, իսկ իրենց բովանդակությամբ դրանք ավելի շատ պարտավորություններ են սահմանում սեփականատերերի, քան ձեռքբերողների համար, բացի այդ՝ դրանք չեն բխում ՀՀ գործող օրենսդրության պահանջներից:

Գործնականում ձևավորվել է մի պրակտիկա, երբ ձեռքբերողները ոչ բոլոր սեփականատերերին են ներկայացնում իրենց անշարժ գույքի շուկայական գնահատման հաշվետվությունները, ինչը պարտավոր են ներկայացնել բոլորին անխտիր: Սեփականատերերն իրենց սեփականության շուկայական արժեքի վերաբերյալ տեղեկանում են նախնական պայմանագիր կնքելիս կամ բանավոր՝ ձեռքբերողի կողմից՝ զրկվելով անհամաձայնությունների դեպքում սահմանված ժամկետում դատարան դիմելու հնարավորությունից:

Բացի այդ, Երևանի օտարման գոտիներում տարբեր ձեռքբերողներ ցուցաբերել են տարբեր և անհավասար մոտեցումներ՝ առաջարկելով սեփականատերերին և այլ գույքային իրավունքներ ունեցող քաղաքացիներին ոչ շահավետ պայմաններ, մասնա-

վորապես՝ անշարժ գույքի դիմաց փոխհատուցվել է շուկայականից անհամեմատ ցածր գին (օրինակ, Երևանի Փ. Բուզանդի փող. 25 հասցեի հ. 16՝ 55,7 քմ բնակարանը գնահատվել է ընդամենը 23080 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ՝ ներառյալ ՀՀ հարկերը¹⁵) Ըստ Եվրոպական դատարանի՝ Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքի պաշտպանությունը կլինեք երևակայական և անարդյունավետ, եթե գոյություն չունենար որևէ համարժեք սկզբունք: Անտարակույս, սեփականությունից զրկելու դիմաց փոխհատուցում վճարելու պայմանի առկայությունը նյութական գործոն է տարբեր շահերի միջև հավասարակշռությունը և սեփականությունից զրկելու արդյունքում սեփականատիրոջ համար առաջացած հետևանքները գնահատելիս: Գույքի օտարման հետ նախնական, արդարացի փոխհատուցման չտրամադրումը խախտում է մասնավոր և հանրային շահերի հավասարակշռությունը:

Դատական ակտերի մոնիթորինգի արդյունքում և հասարակական կազմակերպությունների զեկույցներից¹⁶ պարզ է դառնում, որ փոխհատուցումները սեփականատերերին տրամադրվել են շուկայական արժեքից զգալի ցածր՝ ծանրաբեռնելով սեփականատերերին նաև հարկային պարտավորություններով¹⁷:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հաճախ է ընդգծել, որ տարբերակված մոտեցումը չի հակասի կոնվենցիայի 14-րդ հոդվածի պահանջներին, եթե այն հիմնավորապես և օբյեկտիվորեն արդարացված լինի ընդհանուր շահի նկատառումներով: Սակայն տարբերակված մոտեցման անհրաժեշտությունը որոշելու հարցում

¹⁵ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին դատարանի 10.03.2005 թվականի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ ընդդեմ Ս. և Տ. գործով կայացրած վճիռ:

¹⁶ Տե՛ս «Պետական կարիքների զոհեր» ՀԿ-ի նախագահ Ս. Բաղդասարյանի «Բացառիկ գերակա շահի իրագործումը Երևան քաղաքում» վերտառությամբ զեկույցը:

¹⁷ Հարկ է նկատել, որ օրենսդրական փոփոխություններից հետո այդ գումարները վերադարձվեցին:

պետություններին տրամադրվող հայեցողության թույլատրելի շրջանակը շատ ավելի նեղ է, քան թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի պարագայում: Կոնվենցիայի 14-րդ հոդվածը ոչ սպառիչ կերպով է թվարկում այն հիմքերը, որոնց հիման վրա խտրականություն գործադրելն արգելվում է: Սեփականության իրավունքի տիրույթում գույքային դրությունից բխող խտրականությունն ավելի քան աչքի զարնող է: Ավելին, դատարանները նույնիսկ գտել են, որ մինչև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ընդունումը թույլատրելի է եղել վարչական մարմինների կողմից կամայականության դրսևորումը¹⁸:

Հանրային գործառույթներով quasi-ինքնուրույն ինստիտուտների ներգրավումը

Դատական ակտերում արժաժված օտարման գործընթացի ընդհանուր պատկերից երևում է, որ դատական ակտերի պատճառաբանական մասերում շեշտը որպես կանոն դրված է պետության քաղաքացիաիրավական իրավասութեկտության և նրանց հետ հավասար հիմունքներով քաղաքացիաիրավական հարաբերություններում հանդես գալու իրավունք ունենալուն, իսկ երբեմն էլ պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասնավոր իրավունքի ինքնուրույն սուբյեկտ հանդիսանալու վրա:

«Իրավունքի սուբյեկտ» հասկացությունը մեկ միասնության մեջ ընդգրկում է երկու բնութագրիչներ՝ տարբեր իրավահարաբերություններում մասնակցելու հնարավորություն և իրական մասնակցություն: Իրավունքի ինքնուրույն սուբյեկտ հանդես գալու համար կարևորագույն պայմանը կամքի ինքնուրույն ձևավորման և կամահայտնության հատկություններն են: «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված է, որ *պետական կազմակերպությունը շահույթ*

¹⁸ ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի թիվ ԵՔԴ-0462/02 գործով 23.11.2008թ. որոշում:

ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվում է միայն մշակույթի, առողջապահության, սոցիալական սպորտի, կրթության, գիտության, բնապահպանական և ոչ առևտրային այլ բնագավառներում գործունեություն իրականացնելու նպատակով: Պետական կազմակերպության հիմնադիր կարող է հանդիսանալ միայն ՀՀ-ը՝ ի դեմս կառավարության: Պետական կազմակերպության կառավարումը, հետևաբար և գույքի տնօրինումը, իրականացնում են հիմնադիրը (ՀՀ-ը), նրա՝ ՀՀ լիազորած պետական մարմինը, գործադիր մարմինը, որին նշանակում և ազատում է լիազորված պետական մարմինը, եթե հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ (հոդ. 12,14,15): Բացի այդ՝ հիմնադիրն ունի պետական կազմակերպության գործունեության և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք (հոդ. 13):

ՎՀ-ը հայց էր ներկայացրել քաղաքացիական դատարան ընդդեմ ՊՈԱԿ-ի՝ անշարժ գույքի առուվաճառքն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքները կիրառելու մասին: Քաղաքացիական դատարանը 27.08.2008 թվականի թիվ ԵՔԳ-0527/02/08 վճռով հայցը մերժել է: 27.08.2008 թվականին ներկայացնելով վերաքննիչ բողոք՝ ՎՀ-ը պահանջել էր բեկանել քաղաքացիական դատարանի վճիռը հետևյալ հիմնավորմամբ. «... անհիմն է քաղաքացիական դատարանի պատճառաբանությունն առ այն, որ «Վարչական հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը, ներառյալ դրա 7-րդ հոդվածը, տվյալ իրավահարաբերության նկատմամբ կիրառելի չէ, քանի որ

ա/ «ԵԿՆ ԾԻԳ» ՊՈԱԿ-ը վարչական մարմին չի հանդիսանում,

բ/ նշված օրենքն ընդունվել է վիճարկվող գործարքից հետո:

Թեև «ԵԿՆ ԾԻԳ» ՊՈԱԿ-ի և հայցվորի միջև 20.02.2004 թվականին կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, այնուամենայնիվ՝ գործով հաստատված է, որ այդ պայմանագրի

կնքումը հանդիսացել է ՀՀ Սահմանադրական դատարանի 18.04.2006թ. ՍԳ-Ո-630 որոշմամբ հակասահմանադրական ճանաչված իրավական ակտերի հիման վրա:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ այդ օրենքի 1-ին և 8-րդ կետի բաժինների գործողությունը տարածվում է վարչական մարմինների՝ հանրային իրավունքի բնագավառում իրականացվող ցանկացած գործունեության վրա: Տվյալ դեպքում, հայցվորի սեփականության նկատմամբ այդ միջամտությունը, որը հանգեցրել է վիճարկվող պայմանագրի կնքմանը, հիմնված է եղել հետագայում հակասահմանադրական ճանաչված իրավական ակտերի կիրառմամբ՝ ՀՀ և Երևանի քաղաքապետարանի կողմից հանրային իրավունքի ոլորտում իրականացվող գործառույթների վրա, իսկ «ԵԿԾ ԾԻԳ» ՊՈԱԿ-ը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հուլիսի 16-ի թիվ 1025-Ա որոշումներով հիմնադրվել է այդ գործառույթների իրականացման համար: Հետևապես, ավելի քան ակնհայտ է, որ տվյալ իրավահարաբերությունը հիմնված է եղել վարչական մարմինների՝ հանրային իրավունքի բնագավառում իրականացված՝ հողամասը «պետական կարիքների» համար վերցնելուն ուղղված գործունեության վրա»:

Քննելով վերաքննիչ բողոքը՝ վերաքննիչ դատարանը գտել է, որ բողոքը պետք է մերժել հետևյալ պատճառաբանությամբ. «Բողոքաբերի դիրքորոշումն ի հերքումն ընդհանուր իրավասության դատարանի կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի դրույթների մեկնաբանությանը և դրա հիման վրա արված եզրահանգումն առ այն, որ պատասխանողը վարչական մարմին է, Վերաքննիչ դատարանը համարում է անհիմն:

Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարում քաղաքացիական դատարանի այն եզրահանգումը, որ պատասխանողը չի հանդիսանում վարչական մարմին: Վերաքննիչ դատարանը նման եզրահանգման է գալիս «Պետական ոչ առևտրային կամակերպությունների մասին» ՀՀ օրենքի և «Վարչական

հիմունքների և վարչական վարույքի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածներով ամրագրված նորմերի համեմատական մեկնաբանության արդյունքում: Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարում նաև քաղաքացիական դատարանի այն դիրքորոշումը, որ սույն գործով վիճելի հարաբերությունը դիտարկվել և որակվել է որպես քաղաքացիաիրավական հարաբերություն: Պետական մարմինները ևս կարող են մասնակցել քաղաքացիաիրավական հարաբերություններին կնքել համապատասխան գործարքներ: Սույն եզրահանգման իրավական հիմքն ամրագրված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասով, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետությունը և համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով: Ինչ վերաբերվում է բողոքաբերի այն դիրքորոշմանը, որ սույն գործով վիճելի իրավահարաբերությունը հիմնված է եղել վարչական մարմինների՝ հանրային իրավունքի բնագավառում իրականացված հողամասը «պետական կարիքների» համար վերցնելուն ուղղված գործունեության վրա, Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ սույն գործով վիճարկվող պայմանագրի կնքումը բողոքաբերի կողմից նշված հանգամանքի հիման վրա բոլորովին չի նշանակում, որ պայմանագրի կնքման հետ կապված հարաբերությունները /որի կողմերն են համապատասխանաբար բողոքաբերը և պետությունը/ դադարում են քաղաքացիաիրավական լինելուց:

ՀՀ ներպետական իրավունքին բնավ ծանոթ չէ հանրային իրավունքի իրավաբանական անձ եզրույթը: Սակայն այս դեպքում էլ հաշվի առնելով քաղ. օր-ի 128 հոդվածը՝ անհասկանալի է մի երևույթ. եթե պետական մարմինները ևս կարող են մասնակցել քաղաքացիաիրավական հարաբերություններին և կնքել համապատասխան գործարքներ, ապա ի՞նչն է պատճառը կամ ինչո՞վ է պայմանավորված ՊՈԱԿ-ների՝ իբրև թե մասնավոր իրավունքի սուբյեկտների թատերաբեմ հանելը: Բացի այդ՝ անտեսվել

է այն հանգամանքը, որ քաղաքացիաիրավական հարաբերություններում հավասար հիմունքներով որպես մասնավոր իրավունքի սուբյեկտ հանդես գալու համար պետությունն ունի այդ իրավահարաբերությունների շրջանակներում իր վարչահրամայական թե՛ իրավական, թե՛ գործնական լծակները օգտագործելուց ձեռնպահ մնալու նեգատիվ պարտականություն: Պետության նման հարաբերություններում թափանցիկ և ոչ խտրական հիմունքներով գործելու նպատակով պետական մարմինների քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ մտնելու համար հատուկ օրենքներով մանրակրկիտ սահմանված են հատուկ կանոններ:

Գատական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ դատարանները, անուղղակիորեն ճանաչել են ՊՈԱԿ-ի պետության հետ անմիջական կապ ունենալը և միաժամանակ դրանք ճանաչել են որպես մասնավոր իրավունքի սուբյեկտ: Այսպես, վերաքննիչ դատարանի թիվ ԵԶԳ-0462-02 գործով 2008 թվականի հոկտեմբերի 23-ի որոշմամբ մերժվել է հայցվոր ԱԽ-ի վերաքննիչ բողոքը Երևանի քաղաքացիական դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 30-ի վճռի դեմ, որով մերժվել է նրա հայցն ընդդեմ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի՝ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Գործում վերաքննիչ դատարանը, ընդունելով հայցվորի այն պնդումը, որ «ԵԿՆ ԾԻԳ» ՊՈԱԿ-ը հանդես է գալիս պետության անունից, սակայն մերժում է ՊՈԱԿ-ը վարչական մարմին դիտարկելուց: Ըստ հայցվորի պաշտպանների՝ Վերաքննիչ դատարանը իրավահարաբերությունը «հանրայինի» կամ «մասնավորի» շարքում դասելու հարցում որոշիչը եղել է ոչ թե իրավահարաբերության էությունը, այլ դրա ձևական կողմը՝ այն, որ «ԵԿՆ ԾԻԳ» ՊՈԱԿ-ը ինքնին իրավաբանական անձ է և առանձին վերցված վարչական մարմին չի հանդիսանում: Նման պայմաններում վարչական մարմինները, ի դեմս իրենց իսկ կողմից ստեղծված ՊՈԱԿ-ների, ցանկացած դեպքում կարող են խուսափել «Վարչարարության հիմնունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝ իր համար

ոչ բարենպաստ դրույթների կիրառումից՝ իրականացվող վարչական վարույթը հանձնարարելով կամ լիազորելով իրավաբանական անձի:

Այսպիսով, երբ կամահայտնողը պետությունն է (իսկ գործարքի, այդ թվում՝ *սյայմանագրի բուն էությունը կամահայտնությունն է*) և առանձնացված գույքի de facto, ինչու չէ նաև de jure տնօրինումը իրականացնում է Հայաստանի Հանրապետությունը, նման մասնավոր իրավունքի quasi-ինքնուրույն սուբյեկտի ներդրումը ոչ անհրաժեշտ ավելորդություն է և, ըստ էության, միտված է ծավալվող հարաբերությունները հանրային իրավական դաշտից արհեստականորեն փոխանցել մասնավոր իրավական հարթություն: Դատարանները, ճանաչելով պետության՝ քաղաքացիաիրավական հարաբերություններում հանդես գալու իրավունքը և ՊՈԱԿ-ների պետական կազմակերպություն հանդիսանալը, միաժամանակ որակել են առկա հարաբերությունները իբրև քաղաքացիաիրավական:

ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՁԵԿՈՒՅՑ

ԱՐԴԱՐ ԴԱՏԱԸՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

«ԱՆ-ՋՈՆ» ՍՊԸ

ք. Երևան, Սոսեի 13, հեռ.՝ (+37410) 27 97 53

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ _____: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ տպ. մամուլ:Տպաքանակը՝ օրինակ: